

ՎԱՐՔ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲԱՅ

Ա. Միաբուժայ վարուց պատմութիւնն մենք զրոյ էինք 1904 թուականին, երբ մեր յարգելի հանր զուցեալ բարեկամի Գր. Խալաթեանց այդ մասին մրցանակի յայտարարութիւնն արաւ։ Նկատելով գործս թերի փափաքելի կատարելութենքն, զանց արինը տպագրութիւն տալու։ Պատեհաւ մի երկու տարի առաջ կարգացուցաւ վանցան ճեմարանական համախմբութեան մէջ, և հետագը բարեկան զատուեցաւ, սակայն զոհ չըկնելով ինքնին մեր շարագրածէն, տակաւին մոռացութեան մէջ պիտի մեար, եթէ Գրոց գիւտի Յորելեանն չզարթուցանէր ամեն հայի սրտի մէջ նիրհեալ զագաֆարներն, որով զնահատել և գրուտել կամեցան համայն ազգն իւր Մեծ Զաւակի։ Այս առթիւ զիշանելով յարգոյ «Բազմավէտ»ի խմբագրութեան ներողամիտ ստիպման, միայն զրոց զիւտի զլուխն յանձնուեցաւ տպագրութեան ներկայ Հայկական Յորելեանի նորիրուած պրակիս մէջ, իսկ նախընթաց մասերն պիտի համարակուին նոյնպէս Տաղմավէտի տառաջիկայ 1914 տարոյ պրակներուն մէջ պարբերաբար։ — Ցուցակ յօգուածիս մէջ յիշատակուած տպագրական օրինակին։ Խորհնացի Վենետիկ 1865, Կորին 1833, Բուզանդ 1832, Եղիշ 1893, Պազար 1873։

Մեսրով Զորբորդ գարու սերունդէն է, որ «սնեալ և ուսեալ առ Մեծին Ներսէսի¹» և «վարժեալ հելլէն և ասորի պարութեամբ²», արցունի քարտուզարութեան պաշտօնով ծառայեր է նախ «առ հազարապետութեամբ Առաւանայ ուրումն³» և ապա Խոսրովի թագաւորի ժամանակ՝ զինուորական վիճակի⁴ մէջ։ Տակաւին երիտասարդական հասակէն, նորա վառվուն երեակայութիւնն հայկական հորիզոնն վարդակարմիր կը նկատէր. մանաւանդ երբ կաթողիկոսական աթոռն յաջորդելու կոչուեցաւ Ս. Խաչակի։ Արդեօք այս երկու հանճարներն ազդեցութիւն ունեցան Խոսրովի վրայ շեղելու զինքն Պարսից քաղաքականութենէն, յարելու առ պաշտոնական կամ ունեցած կարծառին ունէին կամ ունեցած են մի ինչ որ դաշանց թղթից զոր երկիցս կը յիշէ Բուզանդ⁵ և ապա Եղիշէ ի Ե դարու։ Խոսրով՝ հրապուրուելով ապազայ միահեծան և ուժեղ Հայաստանի հեռապատկերով, բարեկամութիւն կը հաստատէ Արկադիոս կայսեր հետ և

1. Խոր. զիրք Գ. Ա. ԽԵ՛.

2. Կորին, էջ 6. Պազար 33.

3. Կորին, էջ 6.

4. Փարպեցի 33.

5. Մանաւանդ զի զուխտն յիշեալ զգաշանցն կուելոց զիրդմանցն հաստատութեան, միջնորդութեամբ ի մէջ կայսերն կոստանդինոսի և ի մէջ թագաւորին Տրդատայ եղեալ էր։ Բուզ. Գո. զւ. ԽԵ՛.

6. Եւ իրեւ յանդիման եղեն մեծի թագաւորին, և ընթերցան զիիր պակատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանն նախնեարն, բազում մատեանց ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոյն Ուիլս հաստատութեան ի ներքս գտանէին։ Եղիշ էջ 133։

կը զրգոէ Շապուհի ցասումն, և իր յուսացած օգնութիւնը չգտնելով կորսընցուց թագն և ազատութիւնն: Խոսրովի պաշտօնեայք, գործակիցք, Նախարարը և կաթողիկոսն Սահակ, ամենքն իրը արքունի յանցաւորք պաշտօնանկ եղան և զրկուեցան իրենց հայրենի տէրութենէն և տանէն: Մեսրովը այս ցաւալի իրականութեան առաջ կանգնած, հասկացաւ որ անցել է անդառնալի կերպով յոյս գնել թագաւորական գաւազանի վրայ փրկելու զՀայաստան պաշտօնու կործանումէն: Ա. Սահակ Վաղարշապատու կաթողիկէին մէջ, ցաւոց և տրտմութեան մէջ ընկղմած կը տեսնայ Հայաստանի անկումն և աւերումն: Երկուքը հասկացել էին զիրար: Սահակ իւր եկեղեցական վիճակի մէջ մտիկ կանգնած էր ժողովրդեան, իւր կոչմամբը գեռ կարող էր ոգի և շունչ փշել այդ մարմույն որ քայլբայման վիճակի մէջ ինկել էր. իսկ Մեսրովը հեռու կը զգար ինքզինքը և իրեն աւելի ցաւ կ'ազդէր չկարենալն ժողովրդին և հայրենեաց օգնելը, քան թէ կորուսած պաշտօնն և մարմնական պատիւն¹: Մեսրովը ևս ինկաւ ցաւոց և տրտմութեան մէջ, իրեն ևս երեցաւ տեսիլ, իր սիրելի Հայաստանն էր հրդեհի ճարակ եղած, աւերակներու կոյտերու մէջ կը շրջէին կուզ ու աղուէս: Յամքած էին իւր արծաթի զետերն և չորացած կանաչապսակ անտառախիտ ծառեր. հազիւ սովամահ ուզեռը իւր տարակուսած քայլերն կ'ուզդէր ամայի և անստոյգ ճանապարհով, անսատղ երկինք զրկատարած կը ծածկէր իւր հայրենիքն: Այդ ապշութեան և հիացման մէջ յանկարծ ցնցուեցաւ, սօսափին անցաւ մինչև ոսկերքն, բացաւ աչքերն և ահա փոխուած էր տեսարանն: Հայրենիքն շէն, մարգագետինք զարդարուած ծաղիկներով, ոստախիտ մայրիք պեճնեն լերանց կուրծքն ու գագաթն, Երասխ փրփրագէզ ալիբներով բիւրեղատեսիկ կամար կապէ անդունդի վերայ, երկինք լուսափայլ աստղերով հրճուին և վարդակարմիր առաւօտն կը ծագի Հայաստանի համար: Ուրախութեամբ սիրոն մեծ շնչով լցուած, չի կարող ինք իրեն համար տալ թէ ինչ էին տեսիլները: Այն ատեն սպիտակ թաթ մը մատնանշեց անապատն: Ալիքց զայն Մեսրովը և առանձնացաւ. զոն Մովսէսի պէս պիտի յզանայ իւր եղբարց ազատութեան միջոցները, հոն պիտի ծրագրէ ժողովուրդը անցունել զիտութեան ծովէն և ձուլել սուսերն ի զրիչ, և ապա պատգամախօս ելենալ Հայաստան ազգին, և զրչով պիտի յեղափոխէ և վերակազմէ Հայաստանը. Ժուղթն պարիսապներն: Երջանիկ անապատ Գողթան, ուր Մեսրովը երկնքի և երկրի հետ խորհրդաւոր ներշնչմամբ իւր ծիրանի սրտի մէջ պիտի երկնէ և ձուլէ հայկական զիրերը, որով պիտի ծնանի պատանի զրականութիւնն և հրավառ արշալոյսի աշերէն² պիտի ծագէ Հայոց Ասկէ դարը:

1. Կորին էջ 7. Խոր. զիրք Պ. ու. ԽԵ:
2. Խոր. զիրք Ա. ու. ԽԵ:

Խոսրովու աղէտալի անկման հետևանքները միայն երկու հոգի զգացին՝ Սահակ և Մեսրովը։ Հայաստան միայն մնացեր էր անպաշտապան և անկարող իւր ազատութիւնը և անկախութիւնը պաշտպանելու հզօր և թշնամի զրացի տիրապետութեան դէմ։ Շուրջ հարիւր տարի առաջ (382) Պրոբոս կայսրն հաշտութիւն կնքելով Պարսից հետ, Հայաստանը բաժնեցին մէջերնին, այդ օրէն Հայոց Աև զիրն զրուեցաւ, թէպէտ Տրդատի ջանքերով դարձեալ Դիոկղեափանոսի և կոստանդիանոսի ժամանակ, հովմէտական հովանաւորութեան տակ, կէս դարու չափ Հայաստան ազատ մնաց Պարսից հարստահարութենէն, բայց Տրդատայ յաջորդներու ժամանակ Բիւզանդական կայսերութիւնն երթալով դէպ ի անկումն կը մօտենար, և անզօր կը զգար պաշտպանելու իւր հեռաւոր գաւառները, մանաւանդ Հայաստանը որոյ վաճառմամբ, ասենք, կը յուսար գտնել խաղաղութիւն։ Յովիանոս վերջին հարուածն տուաւ, հովմէտական անուան նախատական դաշինքով։ Այնուհետեւ պարսիկներ հետամուտ եղան ջնջելու զբրիստոնէութիւնը, որպէս զի ընդ միշտ իրենց տիրապետութիւնը՝ ապահովին Հայաստանի վրայ։ Արդէն որմզգական հուրն սկսել էր վառել հայ հողի վրայ։ Մերուժան և նմանիք իրենց ազգին դաւաճաններն՝ կը քանդեն եկեղեցիք, կը ջնջեն յոյն զրեանքն և կ'արգելուն յոյն դպրութիւն։ Արքայից արքան հօրագունի իրաւունք բանեցնելով Հայոց թագաւորներ գահազուրկ կ'անէ և Անուշ բերդի մէջ կը փակէ, կաթողիկոսն կը կապտուի իւր հոգեոր իշխանութենէն, զողցես ըստ բանի աւետարանին «Հարից զովիւն և ցրուեսցին ոշխարքն»։ Պարսիկը այլ ևս չեն մտածեր բնաւ սիրաշահիլ գհայերն՝ արշակունի թագաւոր նշանակելով, այլ Յազկերտ իւր Շապուհ որդին կու տայ թագաւոր, որպէս զի նախարարազունք հետք կենցաղավարելով՝ ընտելանան Մազդզանց կրօնքին, արդէն Մոգերն իրենց վարդապետութիւնը պարսիկ զպրութեամբ Հայոց մէջ տարածելու ձեռնարկեր են, և յաջողութիւնը իրենց կողմն էր, զի պարսկերէնն արդէն արցունեաց լեզու եղեր էր, որով շատերուն ծանօթն, կարգալով այն մոլար զբքերն, վերստին կը զարթնուն հեթանոսական զգացմունքներ, որոնք բըրստոնեայ թագաւորաց ժամանակ թաքնուած մնացած էին, բայց երբ Պարսից իշխանութիւնն գերակշիռ հանդիսացաւ, անոնք կրկին երեան կ'ելլեն¹։ Ամեն նշաններէն կարելի էր գուշակել Հայաստանի վերջն հասած լինեն։ Այսպիսի դառն և դուռարին ժամանակի մէջ կ'արդէին Սահակ և Մեսրովի։ Մին առանձնացած իւր զաստակերտի մէջ յԱռուաստանն Վաղարշապատի²։ իսկ միւսն յիւր զաստակերտն ի Գողթն գաւառի³

1. Եւ զողեալ աղանդն չեթանոսական թաքնութեալ յաւուրոն Տրդատայ մինչև յայն ժամանակս, և ապա յայտնեցաւ ի գատթարել թագաւորութեան արշակունեաց։ Խոր զիրք Գ. զւ. Խլ.

2. «Հասանէր յառաջազոյն ի զաստակերտն իւր յԱռուաստակն (Առուաստան) յԱյրարատեան զատորն ի Վաղարշապատ քաղաքն»։ Ազմանքեզոս էջ 626։

3. Երթեալ իջանէր առուաստան (Առուաստան) Գողթն յառաջին զաստակերտն իւր Կորին էջ 14։

ինքզինքն միայնակեցութեան տուած։ Ահա այդ երկու մարզոց մտաց առջև պատկերացած էր Հայաստանի ներկայ տիսուր վիճակը և ապագայի ահաւոր կործանումն։ Երկուքն ևս նոյն կրօնից սուրբ նախանձով և հայրենեաց սիրով վասուած, կը խորհեին անոր փրկութեան հնարքը գտնալ։ Եւ գտան հնարքը, պահել և պահպանել քրիստոնէական կրօնքն և լուսաւորել հայերը, որպէս զի ճանաչեն իրենց գոյութիւնը պահպանելու գիտակցութիւնն։ Պէտք էր կոռիւլ խաւարի դէմ՝ լուսաւորել միտքը, պէտք էր կոռիւլ պարսից դէմ, ազգային միութեան զաղափարով։ Այս երկու նպատակին համարելու համար կը պակասէր մաքերու հաղորդութեան միջոցն, հայն իւր սեփական գիրն չունէր։

Զարմանալի գուզագիպութեամբ այդ երկու լուսաւոր և խորհող մտքերը կը դիմէին մինոյն նպատակին՝ անծանօթ իրարու աշխատութեան։ Մեսրովք տասը երկար և խաղաղ տարիներու մէջ յղացեր էր իւր մեծ ծրագիրն և կանոնաւորել գրերու մի ցուցակ։ ուստի երբ Մեծն Սահակ վերստին հաստատուեցաւ կաթողիկոս, նա իւր Գողթան սուրբ թաքստոցէն իրեւ Նոր Մովսէս երեցաւ արքունեաց մէջ, Քրիստոսի զինուորութեան արուեստիւն ցանկալի եղած ամենքին։ Ա. Սահակ իւր վիճակի բարեկարգութեան համար Եպիսկոպոսաց ժողով գումարել էր Վաղարշապատի մէջ։ թէ ինչպէս զիմալլը Մազդէզի վարդապետութեան որ քաղցկեղի պէս սկսել էր ճարակ գտնել թէ Նախարարական և թէ ուամկաց տներն¹։ Եպիսկոպոսաց ժողովին կը ներկայանայ Մեսրովք, պարզ և համակրելի ծրագրով։ Հայոց գիր ստեղծել կը փափաքէր²։ Կաթողիկոսի և ժողովականաց քաջալերութիւնն Մեսրովքի ակնկալութենէն աւելի վեր էր. իւր պատրաստած ատաղձն բոլորի մըտքին յարմար եկած էր և համոզիչ։ Որովհետեւ Ա. Սահակայ պէս լուրջ միտք մը չէր կարող վեր ի վերոյ ըմբռնել Մեսրովքի ծրագիրն և ասել թէ «յոյժ զիւրին է զիւտ իրացդ գոր հայցես», և մանաւանդ կը խոստանայ աշխատակից տալ ուրիշ քահանայք, պատուիրելով թէ «ուր տկարանայք ի կարգել զիեզենայսն, բերեալ առ իս՝ ուղղեմ զայն»։ Այս քաջալերութեան աւետիսն առնելով Մեսրովք, հոգիաշունչ մարգարէի կորովով ձեռնամուխ կը լինի Հայաստանի վերածնութեան մեծ գործին, ստեղծելու գիրին Հայոց։ Մեսրովք տասնամեայ փորձով համոզուեր էր թէ կան հայերէն նշանազբեր, որոնց անգործածութեան մատնուելով մոռացուեր էր իւրաքանչիւրի ձայն կամ հնչիւն. և կ'աշխատէր ինքնին առանձնապէս կատարելագործել. ուստի երբ իմացաւ թէ Ա. Սահակ նոյն նպատակով եպիսկոպոսաց ժողով գումարել է, թելազրուած վռամշապուհ թագաւորէն, որ հայերէն զրի և քարտու-

1. Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծովք առ Աստուած կանխէին վասն ամենայն ոգոց Քրիստոսարեր փրկութեան հասանելոյ. Կոր. էջ 8.

2. Ապա. — ժողովել զաշխարհազող խորհուրդն երանելի միարանելոցն, և զիրս նշանազրոյ Հայաստան ազգին հասանել (հաստատել). Կորին էջ 8.

զարի պակասութեան պատճառաւ շատ նեղութիւն կը կրէր, կու գայ Մեսրովք կը ներկայանայ իւր ծրագրով։ թէ ժողովականք, «բազում հարց և փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ» և թէ Ս. Այահակ կը համոզուին որ Մեսրովքայ հանճարածն խելքի յարմար էր և իրագործելի, ուստի զինքն կը քաջալերեն հետեւելու առաւելազոյն եռանդեամբ, «քանզի յոյժ զիւրին է զիւտ իրաց զոր հայցէր»։ Սակայն Մեսրովք գործի ծանրութիւնն բաջ հասկացած լինելով, և տասնամեայ ճգնութեամբ խոնարհութեան խորն իջած, ի լուր Դանիէլեան նշանագրերուն, կը թողու և կը հրաժարի պահ մը իւր սկած յաջող և սիստեմատիկ գործէն։ Դանիէլեան նշանագրաց հետազոտութիւնն և փորձնական գործողութիւնն երկու կամ աւելի տարով յետաձգելու պատճառ պիտի լինին Հայկական դպրութեան զիւտին։

* * *

Տարօնոյ Ս., Յովհաննէսի Մարգարէանոցն կամ Հացեաց զրախտ կոչուածն լի էր ասորի և յոյն կրօնաւորներով, խառն Քուրմերու ցեղից ձեռնադրուած վարդապետաց և եպիսկոպոսաց հետ։ Զորրորդ դարու պատկանող հոչակաւոր Վարդապետը Եպիփան, Գինդ¹ և այլն այս վանքէն էին և աշակերտը Մեծի Դանիէլի Ասորուոյ, որ ընդհանուր զբլիւաւոր էր Հայաստանի եկեղեցիներու²։ Բուզանդի պատմութեան ընթացքէն կ'երեսի որ Հացեաց զրախտի Միաբանութիւնն իւր առաւելական պաշտօնը կը տարածէր աւելի Հայոց հարաւային աշխարհներու վրայ, Մոփաց, Աղձնեաց, հայ Միջազգետաց և այլն։ Գիտութիւնն և զրագիտութիւնը ասորերէնի և յունարէնի՝ առաջին տեղն բռնած էր եկեղեցական պաշտամանց մէջ։ յառաջազիմութեան և զարգացման սիրահար Դանիէլի Աշակերտներից մին Եպիփան, Հայեցողական կեանքին հետ միացուց նաև զիտութիւնն իրական կեանքի համար, զիխաւոր նպատակն էր քրիստոնէական կրօնքն ժողովրդական դարձնել, մատաղ սերունդն կրթելով. ուստի «և զնէր վարժեար ընդ ամենայն երկիրն Խոփաց, և լինէր Եպիփան լոյս երկրին Ծոփաց և լուսաւորէր զնոսա մհծապէս³»։ Եպիփան իր գործունէութեան շրջանն կ'ընդարձակէ, անցանելով նաև

1. Եւ էր նոցա բռն զլիաւոր սուրբն Գինդ, զի ամհասարակ ամենայն մարդիկ երկրին Հայոց անուանեալ կոչէն սմա վարդապետ։ Բուզ. Գոզ. Զ. զւ. ԺԶ:

2. Այլ վերակացու և հրամատար տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց Մեծաց ընդ ամենայն տեղիս։ Բուզ. Գոզ. Գ. զւ. ԺՄ:

3. Ծոփա և այլ 14 զաւաոց ծեսական (պարզեական) իշխանութիւն էին Գր. Լուս. որուցոց և թոռանց։ Այս զաւաներու մէջ յատակ ինամբով «Ս. Կերոչս կարդէր ի տեղիս տեղիս դպրոց յունարէն և տուրքէն յամայն զաւաոց Հայոց — (Բուզ. Պազ. Դ. թբ.): Դարձեալ նոյն զպրոցին կը պատկանի... Հայոտաց — Ակորդուաց աշխարհն Վարդապետ տուեալ էր»... Ասոր համար է որ Մեսրովք Ասորիէն զանալէն զինի, յետ ոզջունելոյ Ս. Այահակն և Պամաշպուհ թագաւորն վարդապակի հրաման առեալ ի թագաւորէն սկիզբը առնելոյ զիսուժութուն կողմանն Մարաց (վարդապետէ)... մինչեւ բնաւ արտաւոյ իւրեանց բնականութեան զերծանել» (բանականութեան վերծանել)։ Բուզ. Գոզ. զւ. ԺՄ. — Կոր. էջ 12:

Աղձնեաց երկիրն «լուսաւորէք և զնոսա»։ Եւ Միաբանութիւն կամ վը-կայանոց մի ևս կը շինէ Տիգրանակերտ քաղաքի մօտակայ մի աւանի մէջ¹։ Հայախօս և ասորախօս բնակչութեան մը համար, զուտ ասո-րի կամ յունական պարութիւն ձեռնտու չէր, նա մանաւանդ որ այն կողմերն երկար գարեր Հոռվմէական ազգեցութեան տակն ինկած էին, և լատին լեզուն այնքան ծանօթ լինելու էր երկրի վարիչներուն որ-քան էր ասորին և յոյնն։ Ուստի հարց է թէ Եպիփան ի՞նչ զպրու-թեամբ կ'ուսուցանէր և լուսաւորէք իւր վարժարաններու մէջ հայ մանկր-տիե, որու համար զրեթէ անպէտք էին ասորերէնի և յունարէնի 22 զրե-րից բաղկացած այրութենը։ Չունէին մի այս Հայ-Ասորա-յունական վարժեարն իրենց առանձին պայմանական զպրութիւններէ², Պահլաւէ, Զենդէ, Փիւնիկեան և այլն զրեթէ, փոքր ի շատէ յունական կամ Հոռվմէական զրութեան նմանութեամբ ձևակերպուած։ Այս՝ ապահովապէս ունէին և իրենց համար մինչև անզամ բաւականացուցիչ, որ չեն քաշուիր Վուամշապուշին, Հայոց թագաւորին, առաջարկելու մտցնել նաև Վե-րին Հայոց վարժարաններու մէջ։ Դանիէլ ասորին այս զպրոցին կը պատկանէր, հետեապէս այդ նշանազրերն նորագիւտ կամ Դանիէլի հնարած կամ յարմարցուցածն չէին։ Թիւրիմացութիւնն թուի յառաջ եկած է կորեան մի աղաւաղ ընթերցումէն յորում նա ասէ. «Դանիէլ... որոյ յանկարծ ուրեմն նշանազիրս ալփարետաց հայերէն լեզուիս»։ — մինչեռ կարգալու է. «Պատմէր նոցա արցայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ անկարծ (ստորգիւ) ուներ նշանազիրս ալփարետաց հայերէն լեզուիս³։ Նոյնը աւելի անորոշ բացատրուածէ Խորենացու մօտ, Հարէլին ասել տալով, որ խոստանայր հայկականացս լեզուաց առնել նշանազիր, յար-մարեալ ի Դանիէլէ⁴։ Մինչզեռ շատ բացայայտ է Փարագեցու զրածն որ կու գայ հաստատելու թէ հայերէն նշանազիրք կային⁵ Դանիէլի մօտ, և սոքա ոչ այլ ինչ էին քան Եպիփանու Ծոփաց և Աղձնեաց վարժա-րաններու մէջ կիրարկուածն, կ'ուզեմ ասել նորագիւտ չէին և ոչ Դա-նիէլէն յարմարց։ Եւ իսկապէս երբ Վահրիճ Հարէլի հետ կ'երթան առ Դանիէլ ուսանելու և հմտանալու բաջապէս ընթերցանութեան, կը տեսնան որ «վաղնջուց» գտնուած նշանազրեր են, յունական այրութենի կարգաւ շարուած։ թերեւ Դանիէլի բոլոր արդիւնքն յայսմ է և ոչ

1. Եւ լնոյր զերկիրն Ծոփաց Վահրիւք. և զնէր Վարժեար ընդ ամենայն երկիրն Ծոփաց, և մինէր սուրբն Եպիփան լուս երկիրն Ծոփաց, և լուսաւորէք զնոսա մնձապէս։

Անցանէր և յերկիրն Աղձնեաց, լուսաւորէք և զնոսա և լնոյր զերկիրն Աղձնեաց վաներով։ և շնէր վկանաց մի յաւանին ի քաղաքեն Տիգրանակերտի, Բուզ. Գոլ. Եւ. թէ։

2. Կորիւն էջ 9։

3. Կորիւն, էջ 8։

4. Խոր. զերք Գ. զւ. ԾԲ։

5. Հարէլ անուն, որոյ ասացեալ էր յառաջազոյն ցարքայ, որ և մերժաւոր է առն բարե-պաշտի Դանիէլի եպիփանուսի, առ որում նշանազիրքն հայերէն կային։ Պազար, էջ 38.

աւելի։ Սակայն ինչ որ լինի, պէտք է փոքր ի շատէ համոզիչ եղած ընդունել Դանիէլեան նշանագրերն, որ Ս. Սահակ և Մեսրովը արժան դատել են երկու տարի, կամ ըստ Խորենացւոյն «սակաւ ամս»։ առ ի փորձ մատաղ մանկտոյն ուսուցանել։ և Մեսրովին յանձնուած ժամանակ այդ ուսուցչութեան պաշտօնն, առանձին Վարդապետական աստիճան կը տրուի։

Դանիէլեան նշանագրերերն ըստ օրինակի յունականին շարուած, ենթադրել կու տայ որ 22է աւել չէն, զոր փորձելով երկու տարի, համոզուեցան որ բաւական չեն հայերէնի վանկեր և հոլովեր կազմելու համար։ Գուցէ Դանիէլ իւր կողմէն պայմանական նշաններ գրել էր այլկայլ զրերու վրայ կրկնածայներու և միւս հնչմանց պակասն լրացնելու համար, որ ինչպէս փորձն ցոյց տուաւ գործը կը գժուարացնէր և անկարելի կը դարձնէր ոչ «կարելով ստոյգ հոլովել զհեզնայ բառից հայկականաց հազներգարար մուրացածոյիւն այնուիկ գծագրութեամբ»։

Դժբաղդաբար Ղազար Փարագեցի յայտնի չ'ասեր թէ Մեսրովը Վաղարշապատու ժողովին ի՞նչ ատագծ ներկայացուցեր է, որոյ համար «քաջալերութեան աւետիս» աչքալոյս կ'ընդունի Սուրբ Հայրապետէն, սակայն դատելով որ նա երկար ժամանակ բարտուղարական պաշտօն վարած է, — մանաւանդ Խոսրովի ժամանակ, յորում Հայոց յարաբերութիւնն զիւանական գործերու բացառապէս Պարսից արքունեաց հետ էր, որ ժամանակի համար կը զրէ Խորենացին թէ «պարսկականաւ վարէին զրով» — հաւանական կը թուի մեզի որ Մեսրովրայ նշանագրոց մի մասն առնուած լինելու էին Պարսիկ և զենտի կամ պահլաւ նշանագրերէ և խառնած յոյն և ասորի նշանագրութեանց հետ որք աւելի ծանօթ էին հայոց։ անոր համար երբ կը լսեն որ Դանիէլի մօտ կը գտնուին ըստ յունականին յարմարցուած տառեր, իսկոյն Մեսրովը, առ խոնարհութեան թէ համակրութեան, իւր սկսած ձեռնարկն կը թողու և կ'անցնի փորձելու ասորւոյն զրերն որք խլեցին իւր բեղմնաւոր կեանքի երկու կամ աւելի տարիներ։

Դանիէլան նշանագիրըն եղած են հաւանօրէն հետեւալները. ա. ր. զ. դ. ե. է. ը. ր. ի. լ. խ. կ. դ. մ. հ. ո. պ. ս. վ. տ. ր. որոց քնորոշն է մի հասող գիծ, որի մանը կտորներն կը միանան իւրաբու հետ եռորդ զծով։ Խոկ մնացածներուն վրայ շարունակութեան մէջ կը խօսինք, յորում պիտի երեկի Մեսրովրայ արգիւնցն։

Մեսրովը սուրբ Սահակայ տուած օգնականներով կ'իջնէ Միջազիտը, տեսակցելով Դանիէլի հետ՝ Եպիփանի շինած վանքի մէջ՝ իբրև

1. Եւ յորժամ բազումը ի նոցանէ տեղեկանային, ազա հրաման տայր ամենայն ուրեմնին կրթել, որով և յաստիճան իւր Վարդապետութեան զեղեցիկ երանելին հասանէր։ Կորիւն, էջ 9։

2. Խոր. պերք Գ. գլ. ՄԲ։

նախածանօթ՝ ի մանկութենէ ինքն Ա. Յովհաննու Մարգարէանոցի մէջ ուսած լինելով, իրրի բնիկ Հացեաց Գրախատին, և աւելի բան չգտնելով կ'անցնի Տիգրանակերտ և ապա ուղիղ յԵղեսիա, որ Գ դարու կէսէն սկսած քրիստոնէական զարգացման կեղրոն դարձել էր, յորում ժամանակի կատարուած է նաև Ա. Գրոց «Պեշիտօ» կոչուած թարգմանութիւնն ասորի լեզուվ, Ալբալիր ընդունելութիւն կը գտնէ երկու բաղաբաց Բարելաս և Ակակիոս¹ Եպիսկոպոսներէ, ընձեռելով ամենայն միջոց՝ որպէս զի Մեսարովը զրոց զիւտն՝ կատարելազործէ ուսումնասիրելով տեղոյն բարձրագոյն վարժարանն և նոխ դիւանն։ Սակայն յուսախար եղած, ի զուր եկած չլինելու համար, իր սիրելի աշակերտներն կը տեղաւորէ Եղեսիոյ մէջ՝ ունանը ասորերէնի և զայլս յունական զպրութիւն սովորելու, իսկ ինքն իւր խոյանըն յառաջ կը տանի երկու ընկերներով և Հոռզին իրեն կ'առաջնորդէ անցնելու Եփրատը աւետեաց լուրն ընդունելու և սրտին վրայ Աստուծոյ զիրը զրելու համար։

* * *

Եփրատի աջ ափանց վրայ կ'ամրառնար զզեակ մը որու բնակիչներն դաշնակից եղած են Հայոց հետ ինն դար ն. Ք. Ասորեստանիայց լուծը թօթափելու համար, կոմմագինաց երկիրն էր սա, որոց ոստան եղած է Սամոսատ կամ Շեմշատ²։ Մակեդոնական տիրապետութիւնը մերժելու համար, դարձեալ համախոռութեամբ Հայոց հետ զէնքի կը դիմեն, առաջին թագաւոր կը յիշուի Օրոնտ կամ Հրանտ աներ Արտաշէսի Մեմնոնի (շուրջ 164 թուականին) երբ Վաղարշակ թագ կապած Հայաստան կը բարեկարգէր։ Իսկ Հռովմէական հարստութեան ժամանակ Սամուատ կառավարչական աթոռանիստ եղաւ բոլոր Եփրատական կողմերուն. Տիգրանակերտ, Եղեսիա և Պալմիրայ և այլն անոր իշխանութեան կը հնազանդէին³։ Խշանանիստ քաղաքի մէջ ամփոփուած էին միւս դիւաններէն էական դոկումենտներ, և դիւանի ծառայութեան համար կային ճարտար քարտուղարներ, որոնք ամեն ազգի զբչութեանց տեղեակ լինելու էին։ Եղեսիոյ Պատառն ճարտարան հեթանոս իշխան դիւանին, կը վկայէ ճարտարաց զրուածոց փոխազրութիւնն յԵղեսիայէն ի Սամուատ, և խորհուրդ կու տայ Մեսրովրայ դիմել զնալ Սամուատ իւր փափաքելին թերես զտնելու համար։ Այս տեղն ևս ըստ վկայութեան կորեան, Մեսրովը՝ եպիսկոպոսէն և Հասարակութենէ մեծապատիւ կը մեծարուի⁴, պարագաներ՝ որոնք մեզ յիշելու հարկ պիտի լինի։

1. Assemani J. S. Biblioteca Orientalis Romiae 1719 C. XIV p. 197. անի այս պէս Rabulas Edesse episcopus ab anno Christi 412 usque ad annum 435. Իսկ Տիգրանակերտ յիշը Ակակիոս Եպիսկոպոս շուրջ 400 Ա. 1 Բառզիրք, Կամա.

2. Արեգ-Քաղաքաւ։

3. Babelon. Histoire ancienne de l'Orient t. IV.

4. Եւ ապա... իջանէր ի քաղաքն Սամուատցաց, յորում մեծապատիւ իսկ յԵղեսիազուն մեծարեալ լինէր։ (Կոր. Էջ 10)։

Հայկ. Ցորելեամ

Մեսրովը Ամառասատի մէջ կը հանդիպի թանձկագին նիւթերու՝ իւր գործի ուսումնասիրութեան համար։ Այդ աշխարհը դեռ Հայկազանց շրջանի մէջ Արամայ բաջագործութիւնը կը յիշէր, Արշակունեաց հարստութեան ժամանակ հզօր արքայի Տիգրանայ յաղթութեանց շոփնդն կը հնչէին լերինք և բլուրք, որոյ զէնքերու յաջողութիւնն կը գրգռէ զԱնտոնիոս դիմելու ի Հայո։ ճանապարհին՝ կ'առնու զԵամշատ, ուր այնունեան զօրանիստ և վարչական դիւան հաստատուեցաւ։ Այդ դիւանի մէջ Մեսրովը գտաւ եղիպատական, եթովպական, փիւնիկեան բարեփոխած Պալմիրայի հնագոյն մատեաններն, թագաւորական և մեհենական զրութիւնք, և հոռվմայեցին Հռուփանոս կամ Ռուփինոս ծանօթացուց զինքը Յոյն և Հռովմէական Պալէօգրաֆիայի հետ։ Ահա այս է Մեսրովքայ զրոց գիւտի բաղդորոշ ժամանակն¹։ Գիշեր ու ցերեկ անխոնչ պարապելով կը գտնէ իւր արուեստի բանալին, սրամիտ և անզրադարձող մտքէն չեն վրիպիր յոյն-հոռվմէական այրուրենի զարգացման փուլերն, բաղդատութիւնն այլևայլ նշանագրաց, համեմատական կերպաձեռութիւններ որ ընդուներ են նոյն աղբիւրէն բղխած զիրերն, լոյս կը ծագեն մտացը մէջ, երեակայութիւնն կը գործէ նաև քնոյ մէջ։ իւր գիւտով հիացած յափշտակուած է և գերմարդկային զօրութեան կը զրէ իւր արած զիւտն, աստուածային շնորհաց պարզե մը²։ Մեծամեծ գիւտեր եղած են առանց շատ մտածելու և խորհելու՝ ինչպէս իմաստափրական կամ երկրաչափական խնդիր լուծելու համար միտք կը յոգնեցնեն մարդիկ։ Բնութեան գաղտնիքներ ամեն օր ամեն վայրկեան մարդու աչքի առաջ են, բայց մտքի արթնութեան այն ինչ տուեալ վայրկեանը պէտք է դէպքն ճշտիւ բմբռնելու և անզրադառնալու համար։ Գալիլէոսի համար մի լապտեր, Նկոտնի համար մի տանձ, Վոլտայի համար մի զորտի ոտք, պատճառ եղան բնութեան օրէնքները սահմանելու և մեծամեծ գիւտեր անելու, գիւտութեան կանգնած յաղթանակներն են անոնք անմահացնելով գտիչ հանճարներն։ Այսպէս նաև Մեսրովքայ համար նշանակութիւն ունեցաւ մի հանգամանք, որ վրիպեր էր շատերու աչքէն։ Նա Սամոսատի զիււնին մէջ գտաւ երկու զրութեան սիստեմ, սեմական լեզուներու այրութենն աջէն դէպ ի ձախ և հորիզոնական զրութեամբ՝ և յոյն-հոռվմէական զրութիւնն՝ ձախէն դէպ ի աջ և ուղղահայեաց զիրքով։ Պահ մը մտածած է Փիւնիկեան և կաղմեան զրերու վրայ, և տեսեր է անոնց փոխադրութիւնը անսայթաց և գեղեցիկ։ Գաղափար մը փայլակի պէս անցեր է մտքէն և աներեւոյթ ձեռքի թաթ մը զրեր է սրտի գործարանի վրայ իւր փնտուած այրուրենն։ Գիւտն եղած էր։ Մեսրովք իր սուրբ աջողն

1. Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճանգտանելոյ։ (Կոր. էջ 10)։

2. Որում պարզէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական չափուն ծնեալ ծնունդս նորող և սթանչելի սուրբ աջողն իւրով նշանագիրս հայերէն լեզուին։ (Կոր. էջ 10)։

ստեղծել էր հայ լեզուի նշանագրեր, նոր և սրանչելի կերպով, շատ պարզ և շատ բնական ոճով «փոխաղբելով զհայերէն պթութայսն ըստ անսայթացութեան սիւղորայից հելենացւոց»:

*
* *

Դանիէլեան նշանագրերն երկու պատճառաւ անյաջողութեան հանդիպած լինելու են. առաջին որ նա վաղնջուց գտնուած գրեր, յարմարցուցեր էր ըստ իւրում կարի հայերէն լեզուին՝ առանց փոխաղրութեամ ըստ յունին ձախէն դէպ ի աջ. երկրորդ՝ պակաս գրեր ունէր, որք փոխանակուած էին անշուշտ վերադիր նշաններով, որով ընթերցանութիւնը տանջանք մ'էր և ոչ անսայթաք²: Այս երկու դժուարութիւնը հարթեց Մեսրովք ա. փոխաղրութեամբ, երկրորդ՝ նոր լրացուցիչ գրեր ներմուծեց Դանիէլեան այբուբենի մէջ և անով ամբողջացուց ձայնական հնչումները որով լեզուն կապեց վանկերով և գ. ուղղահայեաց դիրք տալով գրութեան ոճին: «Եւ անդէն վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ յօրինէր սիւղորայիւը և կապօք³»:

Վերջին բառերս հասկանալու համար ամեն ընթերցող պէտք է մտարերէ մեր նախնեաց փոքրիկ քերականնե, ուր նախ գրեր կը սովորեցնեն և ձայնական հնչումներ, ապա միավանկ, երկավանկ և բազմավանկ բառեր կապելով, հուսկ ուրեմն պարզ ընթերցանութիւն՝ առանց հեգելու կամ կապելու: Մեսրովք իւր Քերականնե անձամբ անձին կազմեր էր փոխաղրած գրերով⁴, այս աշխատութեան զործակից եղած են երկու աշակերտներն, որք արդէն բահանայ էին, զորս Ա. Ասհակ օգնական առուած էր «կարգելոյ զհակենայս», մէկն Յովհան Եկեղեաց գաւառէն, միւսն Յովսէփի ի Պաղանական տանէն, բաջ ասորագէտներ և տեղեակ Դանիէլեան վաղնջուց յարմարցուցած գրերոն: Մեսրովք այնքան զոհ էր իւր արած գիւտով, մինչեւ անգամ յաջողութիւնը ուղղակի աղօթքի զօրութեան կը վերագրէր և ըստ այնմ իւր աշակերտը զորի անցուցին⁵: Միայն մի բան կը տրտմեցնէր Մեսրովքայ սիրոն, որ իւր նշանագրերն յայլեայլ դարպութեանց քաղուած լինելով և փոխաղրութեամբ՝ չունէին ոչ համաչափութիւն և ոչ նոյնաձևութիւն, որով զրչութիւնն տգեղ իմն և խառնակ կ'երեէր, նա մանաւանդ երբ համեմատութեան կը զնէր Հոռվմէական գեղարուեստական գեղագրութեան հետ և սաստիկ բարի նախանձով կը վառուէր կերպածելու և կանոնապւորելու

1. Խոր. զիրք Գ. զւ. ԾԳ:

2. Իսկ իրեն ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրը ողջ ածել զսիւղորայս և պկապս հայերէն լեզուույն: (Կոր. Էջ 9):

3. Կոր. Էջ 10:

4. Խորենացի այնպէս զրած է որպէս թէ փոխաղրութիւնը եղած է զործակցութեամբ Հոռվանսամի, որ ճիշտ չէ. մենք Կորեան հետեւցանք:

5. Եւ յարուցեալ յաղօթքից նստեղ զնշանագիրս մեր: Խոր. զիրք Գ. զւ. ԾԳ:

իւր գիրն անոնց պէս։ Այսպիսի գեղեցիկ ցանկութենէ մղուած կը զտնայ Սամուսատի մէջ զշուփանոսն «հրաշալի արուեստիւ հելլէն¹ զրչութեամբ», և կ'աշխատին ի միասին կերպանեկոց Մեսրովի զտած առ ձեռն պատրաստ այրուքնն²։

Կորեան գրածն նշանագրոց ընտրութեան մասին, նախ կը գերաբերի Հոռվմէական գեղագրութեան, որոյ հրաշալի արուեստագէտն էր Հոռվիանոս, ընականաբար նոյն արուեստով և ոճով ընտրեց նախ ուղղահայեաց հաստ գիծը, միացնելով մակագծերն նուրբ թելերով քառանկիւնի ձևով, նմանութեամբ հոռվմէականի զրչութեան կատարելով նաև իւրաքանչիւրի ընտրութիւն։ Մեր այս նոր դիտողութիւնս թող չզարմացնէ զընթերցողն, զի ընդհանրապէս զրոց գիւտի ուսումնասիրողաց³ ուշադրութենէն վրիպեր է միաբ դարձնել Հոռվմէական զրչազրութեան վրայ։ Ամենքի միաբը ցրուել է «հելլէն» բառէն, որ մեր չորրորդ և հինգերորդ դարու մատենազրաց մէջ խառն նշանակութիւն ունեցեր է։ Խսկ մեր մանր դիտողութեամբ կատարած ուսումնասիրութենէն, նշանազրերու գեղարուեստական ոճին, հակառակ սովորական կարծեաց, համոզուեցանք որ Մեսրովրայ գտած նշանագիրները Հոռվիանոս Հոռվմայեցին կերպածնեած է Հոռվմէական Գ դարու կապիտալ (Ֆլիսագիր) կոչուած կաղապարէն (modèle) և որբան ուրախ եղանք մեր վերև յայտնած բոլոր կարծեաց ստուգութիւնը գտնելով հաստատուած մի Հնագրչական (Paléographie) ծանօթաբանութեամբ «Մեծ Համայնագիտական» բառարանի մէջ։ «Այս կապիտալ զրութիւնն հին և նոր զրչութեանց հիմն կը կազմէ, փոխառեալ յունական ալփարետէն, որը ի գործածութեան էին իտալիոյ յունական գաղութներու մէջ. Յոյներէն առնելով իրենց այրուքենն, Հոռվմայեցիք կանուխէն դրոշմեցին, այսպէս ասած, իրենց հանճարի կնիքն։ Գրելու ուղղութիւնն երկար ժամանակ անորոշ մեացած է յունաց մօտ, որը երբեմն աջէն դէպ ի ձախ կը զրէին, և երբեմն ձախէն դէպ ի աջ, և երբեմն շարամանեալ երկու ևս ուղղութեամբ։ Հոռվմէացիք ձախէն դէպ ի աջ ձգուածն ընդունեցին, եռքս վերջնականապէս ուղղանեաց դիրքը տուին զրերուն, բնագծի վրայէն անցնող հորիզոնական ծօղն և կոր կամ փորանկեալ զիծերն կը միանան իրարու հետ ուղիղ անկիւնով։ Առքա նախ արձանագրութեանց մէջ զործածուած են, ապա մատենաներու արտագրութեան համար փոքրիկ փոփոխութիւն կրեր են, այսինքն բնագիծն պահելով հաստ՝ իսկ միացնող զծերն ենորր։ Այս զրերու գեղեցիկ համաչափութիւնն պատճառ եղած է կոչուելու բառակուսի գիր (litterae quadratae)։ Այս տիպի

1. Հայոց համար խառն էր գաղափարը Հելլէն և Հոռոմ կամ Հոռվմայեցի կոչումներուն։

2. Եւ անզէն ի նմին բաղաբան զիէս ոմն հելլենական զարութեան Հոռվիանոս անուն զահեալ, որով զամենայն ընտրութիւն նշանագրայն զնրբադյնն, զկարձն, և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն միանգամայն յօրինեալ և յանկուցեալ։ Կոր. Էջ 10։


3. Զարբանական – Հայ. Դաբր. Վեհափիկ։

4. (Տես. Բուստօքէզօն Հատ. Էջ 854)։

զիրն պահած է միշտ իւր աւանդական գրութիւնն միապաղաղ և խիտ, զանազան մեծութեամբ:

Է Բ Գ Դ Ե Ը Ռ Ի Լ Խ Կ Ղ Մ Ն Ո Պ Ռ Ս Վ Մ Ր

Հայ գլխագիր Ե. դարու (միջնեան մատեաններ գրելու)



Հայ գլխագիր Ե. դարու (զործածական թէ' գլխագիր և թէ Մեծատառ գրոց հետ)

Տարակոյս չկայ որ գլխաւոր զժուարութիւնն կը կայանար Դանիէլեան նշանազրերու հետ զուգազրել համաշափութեամբ Զենտի և Պահլաւի կլորաձև գրերն, որոնք հարկաւոր էին լրացնելու հայկական հնչմունքները և կապելու լեզուի բառերն: Բատ մեզ Զենտ կամ պահլաւ գրերն են զ. ժ. ժ. ժ. ժ. չ. չ. չ. չ. չ. չ. չ. որոց վրայ Հոռվանոս աւելցուցած է լատին գրեր ի, ֆ, թ; Հոռվանոս չստեց իւր համբաւին, և սքանչելի գրչութիւն մը գեղարուեստական յօրինուածով ընծայեց Մեսրովին:

Մեր երկարագիր¹ կոչուածն, բաղդատելով Հոռվմէական «կապի-

1. Փառակուսի երկաթազրի հետ մի և նոյն ժամանակ գրյութիւն ունէր նաև կլորամկիւմ զիրը (Մեսրովեան Երկաթազրի կոչուածն) որ աւելի արձամագրութեանց համար կը զործածուէր քան թէ մատեաններ գրելու, որ թղթի ամբողջ երեսը կը բռնէր. Երբ կլորանկիւնն մա-

տալ» կոչուած զրութեան հետ, գծագրական (graphique) նմանութիւնը ցոյց կուտայ յիբաւի Հոռովանոսի ճարտարութիւնն կերպաձեւուն մէջ: Հոռովանոս Մեսրովայ հետ Գանիէլեան 22 նշանագիրը, և այլ և այլ դպրութիւններէ քաղած 14, ընդ ամենն 36 նշանագիր՝ զամենըն ճաշակով յարմարելէն վերջը, ինընին աեղրամիկ ճաշակը կը գրէ կերպաձեւածնածնագրով, և կը սովորեցնէ Մեսրովին և իւր աշակերտաց գրչութեան արուեստը, «և իսկոյն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց գրոց Սողոմոնի¹»:

Տասն և հինգ դար յետոյ, դիտելով Մեսրովայ ճանաց արդիւնքը, հանճարոյ ստեղծագործութիւնն, որուն Աստուած շնորհեց բաղդր հայոց գիրերը գտնելու, նոյնքան զարմանցով և հիացմամբ պիտի կրկնէինք կորիւնի գրածն «հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոց և սրանչելի, սուրբ աշովն իշրով»: Նորոց, քանզի փոխադրութիւնն և ուղղահայինց դիրքն բոլորովին նոր էր Հայոց և բոլոր մերձակայ ազգաց համար, սրանչելի, վասն զի լատին ամենագեղեցիկ գրոց տիպարի վրայ կերպաձեւած էին ըստ օրինակի, վերև յիշած «կապիտալ» գրութեան զոր «գեղեցիկ համեմատութեամբ» գրուած կը գտնէ Մեծ Համայնագիտակ բառարանն. Սուրբ աշովն, քանզի ամենայն աշխատութիւն թէ գրերու ընարութեան թէտ անուանելոյն և թէ դասաւորութեան վերաբերեալը՝ ինքնին կատարեր էր, այսու իրաւամբ և ստուգիւ ինքն է հեղինակ և գտիչ Հայերէն լեզուի նշանագիրերու²:

*
* *

Վոամշապուհի խաղաղ թագաւորութիւնն, Հայաստանի երջանկութեան կարապետն եղաւ, իրեն պաշտպանութիւնը հարկաւոր էր վերածնութեան գործին և չխնայեց որ և է միջոցի որպէս զի գրոց գիւտը յաջողի և ինքն է որ առաջին Գանիէլեան նշանագրերու գրոյցն կու տայ Ա. Սահակին և առանձին հրովարտակով իւր ազգակիցն Վահրիճ կ'ուղարկէ առ Հարել և բերել կու տան զանոնը: Խաղտախուզտ լեզուով ասու-

տեաններու մէջ գրուէր, միշտ եկիլջեան Մեծատառ էր, և աւելի յաճախեց այս ձեն Եւ դարու սկզբէն եկեղեցական պաշտօնակամ զրոց համար, Սակայն ընդ նմին կարելի է զանել անշրապին ի սկզբանէ մամբ բոլորազիր կոչուածն, որ, նախապէս լուսանցքներու վրայ կը գրուէր, Թերեւս Բոլորազիր կոչուածն ինայոդական լինելով մի երեսի վրայ կը գրուէր խիտ և միապազադ. իսկ զիւազիրն երկաթազիր, իբր երկու իջի բաժանուած, Բառեր որք Գր. Մազմատրոսի դարը կը յիշիցնն: Թէ և բազմատելով մեր զիւազիր - Երկաթազիր կոչուածն յայն և լատին նախորինակներու հետ կը համապատասխանէ Օուչալ գրին որ է բալորզիրը, մինչ Կապիտալ (զելիազիրն) փոքր կոչուած բառակունի երկաթազիրն, ինչ որ կը տեսնամի արուած օրինակներու մէջ:

1. Խոր զիւր. Գ. Ա. ԾՊ:

2. Մեսրովայ գրերու սմանց արտաքին նկարազիրն ըստ ամենայնի նման է հին եղիպատական նկարամիկ կամ սրբազն կոչուած զրութեան, որ պահուած է եթևպացոց զրութեան մէջ որոց նման է նաև լատին «կապիտալ»: արդեօք ի սկզբան մերն եւ կոչուածն է երաթազիր որ աղիտաթեան զարերու փախուն է երկաթազիր, Մինչև շայսոյ դրացից երենց երկաթազիրմ - խոցուրի - տան որ է եկեղեցական կամ սրբազն որ և Մեծինական:

IN POSUIT NATURALIS LOCIS QVOTEMPORE PRIMI
DEN CALION VACUVM LAPIDES AC CLAVIT IN ORBE
VNDE HOMINES NATIDVRVM GENVS SERGOAGET LRRM
PINGUE SOLVM PRIME XELEM PLOMENSIB ANN

(Capitale carrée). Գլխազիր Բ. կամ Գ. դարու (Վասիկ Շահնազ 3256) (Մի իջեան
մատեաններ զրելու համար)

ԹԵՅԱ ՄԻԵԶԵՐԱԿԵՑԱՅՅ ՔՐԵԱԿԱ Կ
ՄԵԱԿԱՐԱՐԱԿԱ, ՅԱՄՈ ԼԱՄ ՊԵՐ, Ի
ՀԱՅՐԱՊԵՄՈՒԹԵԱՆԴԱՅՅ ՄՄԳՐԻԳԱՐԻ-
ԵԼ ՅԵՊԻԱԿԱՊՈՍԻՆ ԵԿՄՆԿԻՒ ԼԿԵՑԻ Յ
ՄԱԴՄԱԳԻՍ ՄՆԻՄՈՅՆԿՐԱՒՍԻ ՈՐԱՐ Ա
ՅԱ Ի ՊԱՄԵՒԵՒ ՔԱԿԱՍՈՐՐԱՅ, ԵՎԵՅԻ ՈՅԱ
ԱՐԵԱ ՔՐԵԶ, ԶԱՅԱԾ ԶԱՅԱԾ ԱՐՄԱՐԱՐԱ-
ԻՎՄԻՖՍՍԵԿԻՄ ԱՌԵՆՇԵՐ ՄԱՐԱՐՈՅ Յ
ԵԵՐԻԽ ԱՄՐՐԱԲԻՆԻ ՈՐՈՅՄԻՐԵ ՇՈՐԵՊԱՌ
ԱԵՐԱՄՐԱԽ ՀԵՋԱՐՀԱՐԱՄ ԵՊԵՎՐԱՊՈՐ.

Օրբեակ Հայ պատազիր մի իջեան զրչութեան

րին չեր կարող հայկական ականջին յարմար ձայներ ստեղծել, որով ոչ զբերու ընտրութիւնն անել լեզուի հեգենայն և կապն յարմարցնելու, վասն որոյ անօգուտ եղաւ ամենայն ճիգն և ջանքն երկամինյ փորձի մէջ։ Հայուն ցաւն հայն պէտք էր դարմանել և այդ եղական հայն եղաւ Մեսրովք։

Մեսրովք այն ոգիներէն էր որ դժուարութեանց առջև չեն վհատիր, մանաւանդ իրենք ընդ առաջ կ'երթան յաղթելու և յաղթանակելու յուսով, այնքան մեծ է իրենց մէջ զգացած բարոյական ոյժն։ Հայրենեաց մեծ սէրն ամենայն մարդկային տկարութիւնն մեղցնել և մոռացնել կու տայ ինքզի՞ցն իրրե, համաշխարհի մենամարտիկ կ'առաջարկէ զլուխ հանելու սկսած գործը, յորմէ կախուած էր Հայաստանի և շըրշակայ դրացի բրիստոնեայ աշխարհաց հոգեկան և բաղարական կեանքի փրկութիւնն. իսկ իրրե հայր, իւր հայրենեացը զաւակաց համար «հոգացեալ յարաժամ տրամէր՝ երանելի այրն Մաշտոց՝ տեսանելով զմեծաջան ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որը բազում թոշակօք և հեռազնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբ մաշէին զաւորս իւրեանց ի զպրոցս ասորի զիտութեան¹»։

Բազում տգիտութեան ձմեռներ անցեր էին, և հասել էր այն Գարունն որ Հայաստանի համար միշտ կանաչ և պտղաբեր պիտի մարքացուեցաւ 404² գարունն, զետինն դալարեցաւ, ծառեր զգեցան տերե, մարգագետինք պճնեցան ծաղիկներով, օդոց անուշաբոյր շունչն զեփիւռի թերերով կ'անցնէր Հայաստանի վրայէն, ամենքի սրտի մէջ զարթեցնելով կեանքի յոյսն. յարութեան և վերածնութեան պատկերն էր, որուն ականատես կը լինէր Մեսրովք Հայրապետական դաստակերտի պատշզամէն։ Մէկ կողմէն կը տարածուէր Արարատեան հոյակապ և հոչակաւոր դաշտն, զոր նկարագրէ Ղազարիկ³, և միւս կողմն վեհմաշուց Մասին, վերամբարձ ուղղագիտակ սպիտականէր զլուխն նկարելով կապոյտ երկնքում։ Հրաշատեսիկ և ակնապարար տեսարանն, օրօրանն եղաւ Մեսրովքայ վեհ և անմահ զաղափարներուն, ուստի հայրական չափուն ծնած նորոգ և սքանչելի հայկական նշանագիրը իրրե հսկայ խայտալով պիտի թեակոխեն ամրող հայրենի սահմաններն։

1. Փարպեցի, էջ 35։

2. Այս տարեթիւն անտարակուտական պէտք է համարել, զի Մեսրովք 45 տարի հոգենը կեանք վարեց, և մեռաւ 439 թ. եթէ 35 հանենց կը մեայ 404, որ պէտք է հաշուել սկիզբն կուսական Հայոց։ Կորեան Բարիլաս կամ Ասսեմպնիի Տարբուլոս յիշած Խպիսկոպոսն 412-435 կարող է հանգիստ իւր տարեթիւն պահել ամուր, մինչ մի ուրիշ եպիսկոպոս Տիգրանա-404 թ. հանդիպած լինելու է սորան։ Իսկ մամանակակց Եղիսաբէտ Խպիսկոպոս յիշակին Փափառ 398-408 series Episcoporum ecclesiæ catholicæ. P. Pius B. Gams 1873 Ratisbonae։ Եթէ Կորին չի յիշատակեր զայս, պէտք է ընական մատոցութեան տալ այն մեր թարգմանիչներուն Եղիսաբէտ և ընկերաց, որոնց զեղեցիկ հրւասիրութիւնն ընդունելով Բարելաս Խպիսկոպոսն, որ թարմ ապաւորութեան տակ խօսելով իրենց Վարդապետի Մեսրովքի ժամանց կուսական մէջ, կարծէ տուած է որ 404ին Պանիկէն արդէն եպիսկոպոս եղած էր Եղիսաբէտ։

3. Փարպեցի, էջ 22։

Բաղզը կը կոչէ զինքն, արծուէհայեաց աչքերն ճանապարհին սևեռած, ամենայն ինչ պատրաստ է չուելոյ. մեկնելոյ ժամն հնչեց, ով ժամ խորհրդաւոր, խնդի, յուսոյ և լացի. ով հրաժեշտ հրարոց սիրոյ և սրտի, համբուրիւ սրբութեան պահ մի գրկախառնեալ և ապա հրաժարեալ, մնայ Ս. Սահակ ընդ երկար դիտելով այն ճանապարհը, ընդ որ Մեսրովը երկու ընկերներով և աշկերտներով երթալով կ'ընկդմէր մթնոլորտի մառախուղի մէջ. իսկ ինքն բազկատարած յերկինս յաղթանակաւ դարձին համար կ'աղօթէր մինչ լոյս ճրագացն և կանթեղացն բորբոքեալ տոչորէր ի սուրբ եկեղեցովն Վաղարշապատ քաղաքի¹:

Մեսրովը կը հասնի Տիգրանակերտ և ապա Եղեսիա, Ակակիոս և Բարիլաս եպիսկոպոսներէն, կղերէն և իշխաններէն, բազում մեծարանօք բեղուներուրին կը գտնէ. անտի Սամուսատ կ'անցնի, ընդունելութիւնն աւելի մեծ է, եպիսկոպոսն և ժողովուրզն մեծագատիւ մեծարանով կ'ընդունին: Շատ ժամանակ չի կորանցներ այս տեղ, Աստուծոյ շնորհցն կը լուսաւորէ Մեսրովքայ միտքը այլեայլ ազգաց վաղնջուց կիրարկած դպրութիւններէն ընտրելով և դասաւորելով հայ լեզուն յարմար նշանագիրը կը ստեղծէ և Հռուփանոսի ձեռամբ կերպածելէ զկնի, ձեռը կը զարնէ թարգմանութեան, Աղողոմնի իմաստութեան գրքին «ճանաչել զիմաստութիւն և զիրատ» և այլն և ինքն Հռուփանոս զայն կը գրէ իւր ձեռքով². և ետես Մեսրովը զի բարի են, բացուել էր մեր գրականութեան առաւտան որ լուսաւոր և զեղեցիկ օր կը խոստանար Հայաստանի: Մեսրովը՝ հոգեոր միխթարութեամբ լցուած դարձուց միտքը դէպ ի հայրենիք, ուր յուսով կը սպասէին իրեն Ս. Սահակ և Վուամշապուհ և Եկեղեցին Հայոց: Սակայն պահ մի մտածած պիտի լինի Մեսրովը, ով պիտի հաւատայ մեր բարի լուրին, ում յայտնի պիտի լինի որ իւր սորբ աջովն էր ստեղծած հայ լեզուի նշանագրերն: Ահա հոս յայտնի կը լինի Մեսրովքայ հեռատեսութիւնն: Փէտք էր նախ սիրաշահել զիանիէլ ասորին և Բարելաս եպիսկոպոսն, որոց ազգամիրական զգացմունքներն ես պէտք էր գոհացնել. որպէս զի Մեսրովքայ Սամուսատ զնալն և լատին նշանագրերու վրայ կաղապարելն իւր նշանագրեն, իրք արհամարհութիւն և նուաստութիւն չհամարուէր Եղեսիոյ հոչակաւոր ուսմանց, ուստի «առնոյք թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին... և բերէր առ եպիսկոպոսն³ ասորոց... առաջի արկեալ նոցա զեւանագիրն աստուածատոր⁴: Վերնական հրաշքի միջամտութիւնն կը բառնայ ի միջոյ մարդկային կիրք և նախանձ և ամենքի սրտէն գոհութեան և զովութեան գրուատիք՝ Եպիսկոպոսաց և համայնքի կողմէն առ Աստուած կը բարձրանան: Եղեսիա մնացած աշակերտաց սիրտն կը

1. Դազմար, էջ 80:

2. Որ և զեցաւ ձեռամբ այնորիկ զրչի, կոր. էջ 10:

3. Եպիսկոպոսն:

4. Կորիւն, էջ 10:

ճիւայ միսիթարութեամբ, որովհետեւ յասրի տանչանացն շուտով պիտի ազատէին: Մեսրովք գովելի հպարտութեամբ, ազգային արժանապատուութեան համար կամհցեր է ունենալ նաև Ասորւոց եպիսկոպոսներէն մի վկայական, որով թէ ժամանակակից մարդկանց և թէ մեզ, որ 15դ հարիւրամեակը կը տօնենք, ապացոյց մի լինէր թէ Մեսրովքեան զրերն Դանիէլեան նշանագիրներու կրկնութիւնն չեն ոչ ձեռվ և ոչ գրուածքի ոճով, այլ տարբեր կաղապի րով ձուլուած և տարբեր սիստեմով շարագրուած: Ճշմարտութեան սիրող Եպիսկոպոսունքն, Մեսրովքի իրաւացի փառքն չկապտելու համար, զրուատեօք կը վարձատրեն անոր ճգանց արդիւնքն, կը զրեն «Թուղրս աւետագիրս» առ Սահակ և Վուամշապուհ, որոց հրովարտակով նախապէս եկած էր Մեսրովք Միջագետք¹:

Անցեր էր մի ուրիշ ձմեռ, ծաղկել էր նշենին, այգիներ անուշահուութիւն բուրեցին, զարթեաւ Մեսրովքայ սրտին մէջ իւր հայրենիաց փափաքը: Իրրե անմահ բանին և զրոց վաճառական, հոգելից ուրախութեամբ, բոլոր իւրայինքն առնելով հետն ուզի կ'ինկնայ զէպ ի Հայաստան աշխարհ: Գրոց գիւտի սոսոյգ համբաւն, թարգմանութեանց նմուշով ըստ ամենայնի համոզիչ, կանխեր հասեր էր Այրարատեան դաշտն, ուրախութիւնն ողողեր էր հայի սիրտն. մտքի յաղթանակը կը պատրաստուին տօնելու, ոչինչ ընդհատ զոռոզ աշխարհակալներու յաղթանակէն, որոնք սրոյ և հրոյ աւերածներու վրայէն կը բարձրանային կապիտոլիոն մրտենիով պսակելու զլուխնին: Խակ Մեսրովք տգիտութիւնը խորտակելով, խաւարը հալածելով, զիտութեան լոյսն լուցեր էր մտքերու մէջ, ինքնապաշտպանութեան բանին զէնքն զրել էր հայու ձեռքը. ուսկից կ'անցնի շինութիւն է, ուր նա կը կոփէ անապատներ կը կանաչին. եթէ ձեռք բարձրացնէ՝ բարերարութիւն է, հարուածն սրտի միխթար, կառաց խոյանքը երջանկութեան աւետարեր: Մեսրովքի հասնելու լուրն կը զզրեցնէ Վաղարշապատը: Հայրապետ և թագաւոր ուրքի են կանգնած, արմաւենիի սոսով զիմաւորելու հայրենիաց մնձ զաւակին, պսակելու յաղթողի անմահ ճակատը: Ա. Սահակ և Վուամշապուհ՝ թո՛ղ ընդհանուր հայրենիքի ուրախութիւնն, առանձին հպարտութեամբ կը ճիւար սրտերնին, նկատելով Հայաստանի Երկրորդ Լուսաւորիչը որ իրենց ազգէն կը ծագի լուսափայլ աստեղ մը պէս. գիտութեան լոյսն կու զայ միանալու կրօնից լոյսի հետ զոր սփոներ էր իրենց նախահաւան Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանի վրայ: Կրօնքի և զիտութեան յաղթանակին հանդէսն է որ տեղի կ'ունենայ Հայաստան աշխարհի, Այրարատեան գաւառի մէջ: Ծեր Մասիսն եղիտասարդ լեռանց հետ կը ցնծայ այսօր թագաւորի և Հայրապետի, նախարարակոյտ ամբոխին և բոլոր ժողովրդեան թափօրի առաջ, Երասխայ լանջն

1. Կորեան մէջ մի պարբերութիւն շփոթութիւն պատճառեր է կարծելու թէ զրոց զիւտն եղած է յԵղեսիա: Եթէ այսպէս եղած լինէր, հարկ չկար Ասմուստէն վկայական բերել առ Ասորի եպիսկոպոսունք թէ Մեսրովքի զտած զիւն՝ Աստուածապարզն է:

ուռելով և փրփրալով՝ խոխոջաձայն կ'ընթանայ սաղմոսերգութեան մրմունջով համբոյր տալով ափերուն։ Բնութիւնն ևս կը մասնակցի նուազաց քաղցրաձայն հնչմանց, ժողովրդի հրճուազին ծափերուն, երբ անմահ Սահակ և Մեսրովի իրարու ցանկալի ողջոյնը կու տան¹։ այդ վայրկեանէն կը սկսի Հայաստանի համար նոր շրջան, «որով երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սբանչելի լինէր²»։

Մեսրովի հնարած գրերն կատարեալ էին ձայնական թիւովն և համաչափ ձեռվն զեղեցիկ, համապատասխան հայկական բարբառոյն, որով «ինքեան ձայնիւ և ոչ մուրացածոյ բարբառով շահել զոգիս Հայաստան մարդկան» կարելի էր ստուգութեամբ. փորձը արդարացուց ամենայն ակնկալութիւնն, երկիր ամենայն համոզուեցաւ որ «սա և» և ուրիշ չէ կարող լինել. պատուէր տրուեցաւ ամեն դպրոցներու մէջ սովորեցնել և կրթել Մեսրովի հրահանգներու համեմատ, Հայաստանի ամեն կողմերէն ուսումնասէր պատանիք թափեցան Այրարատ, ուր բացուեր էր աղբիւր ամենայն զիտութեանց։ Մովսէս՝ մարգարէից դասի հետ, Պօղոս՝ Առաքելոց զնորդը, ձեռքերնին բոնած Քրիստոսի աւետարանը, Ասհակայ և Մեսրովիք առաջնորդութեամբ մտան Հայաստան՝ «Հայաբարբառք հայերենախօսք³» և Աստուծոյ զիտութեամբ առժամայն լին լուսաւորեցին Հայ ազգն։ Այրարատեան աշխարհն նախկին և զինի դարերու մէջ եղաւ Հայոց քաղաքական կեղրոնը, ազգութեան զաղափարի խանձարուրքն, այսպէս եղաւ նաև քրիստոնէութեան կեղրոնն, ուր առաջին անգամ ծագեց խաչի լոյսն, թագաւորական և Հայրապետական զաւագանները իրենց իշխանութիւնը հաստատեցին Վաղարշապատի մէջ, ասոնց երկուրքի համերաշխ կառավարութիւնն, արդիւնաբերեց Հայաստանի վերածնութիւնն. զրոց զիւտով ազգային զրականութեան՝ քաղաքակրթական զործն հրաշցներ զործեց, կերպարանափոխ եղաւ Հայաստան Ասկի դարու կնիքն ի ճակատին։ Մինչև ցարդ՝ Բուզանդ իրաւունք ունէր բամբասելու կամ ամբաստանելու զհայս, որ քրիստոնէական կրօնքն, իրեն լոկ մարդկութեան ուսումն ընդունած էին հայք։ և իրաւացի էր մասսամք՝ թէ ոչ ամրողջապէս, վասն զի եկեղեցական պաշտամունք ասորերէն էին, անհասկանալի լեզու հայ ժողովրդեան⁴։ իսկ զրոց զիւտէն վերջ, մարգարէր, առաքեալը և Քրիստոս ինքնին աւետարանաւն հայերէն կը խօսէին, հասկանալի ամենայն ժողովրդեան, Ա. Սահակի դիւրիմաց թարգմանութեամբ։ «Քանզի յԱրարատեան զա-

1. Որոց տոեալ զամենայն նախարարագունդ աւագանոյն ամրոխ ի քաղաքէն ելեալ պատահէին երանելոյն զափամք Ուհա զեաոյն։ և զցանկալի ողջոյնն միմանց տոեալ, ուստի բարբառոք ցնութեամբ և երգօք հոգեորոք և բարձրագոյն օրհնութեամբ ի քաղաքն դասնային և զաւուրք տօնական ուրախութեամբ անցուցանէին։ Կոր. էջ 11։

2. Կոր. էջ 12։

3. Կոր. էջ 12։

4. Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացունք զրոց ասորի ուսմամքն վարէին ի վանորայս և յեկեղեցիս, յորմէ ոչինչ էին կարող լսել և օսան ժողովուրդեն այսպիսի մէծ աշխարհէն, յաներութենէ լեզուին ասորոյ։ Փարա. էջ 36։

ւառին ի կայս թագաւորացն և քահանայապետացն, բղիսեցին Հայոց շնորհը պատուիրանացն Աստուծոյ¹։

*
**

Մեարովք է ո յանձն առած պարտականութիւնն կատարած էր ամենայաջող և ամենափայլուն կերպով։ Հայաստանին տուեր էր իր սեփական Գիրն նոր և սքանչելի իր սուրբ աջովն ստեղծուած։ Այս աւանդն յանձնեց ամենապահով և ամենակարող ձեռքերուն մէջ ի կատար ածելու։ Ս. Սահակ և Վուամշապուհ անձամբ կը ստանձնեն ազգի մըտաւոր մշակութեան գործը։ Մեարովք հանգիստ աչըռվ զիտեց վերածնութեան սկիզբն, և ասեց՝ արդ այս ուրախութիւնն որ իմս է լցուած է. երջանիկ եմ, վախճանիս հասած եմ, փրկուած է Հայաստան և իր Քրիստոսական հաւատքն, Եկեղեցին։ Սակայն իր առաքելութեան գործն չէր աւարտած, ծրագրի զլիստոր և էական մասն իրազործել էր, պէտք էր ամբողջացնել մնացած մասն ալ յօդել մեծագոյն մասի հետ։ Ծրագրի այս պակաս մասն էր լրացնել նաև Վրաց և Աղուանից զրի և զպրութեան պակասութիւնն, լուսաւորել այդ երկու բրիստոնեայ աշխարհներն և կապել զանոնց սերտիւ Հայոց հետ, կրօնըի և ընդհանուր ազգային ինքնապաշտպանութեան շահերով։ Պարսկական վտանգն, հաւասարապէս սպառնալից էր նաև այդ երկու փոքր և աւելի տկար ազգութեանց համար։ Մենք ձրիարար չենք վերագրեր Մեարովքին այս գաղափարը, որ աւելի պատիւ կընայ բերել իւր հանճարին քան նուաստութիւն, այլ իւր գործոց ընթացքէն յայտնի է այն նպատակը որուն կը զիմէ։

Խոսրովու անկմամբ, ինքն ևս պաշտօնազուրկ եղած, ասացինք, վանականութեան մէջ զտաւ միջոց մը աւելի մօտիկ ապրելու ժողովը զեան հետ։ Քաղաքական յարաբերութիւնն արգիլուած էր իրեն իրը և արցունեաց վեսասկար մարդու՝ մինչև անգամ Արարատն բնակելու, քաշուեր էր Սիւնեաց աշխարհի մի անկիւն։ Սեաւ զգեստ հազած ժամանակ, նա ուխտեց ազնուական վրէժինդրութիւն իր թշնամեաց դէմ ոչ սրով, այլ զրչով։ զրչի զրածն տապարն չի կարող չնջել, կ'ասէ ոռւս առակն։ Պէտք էր կոսւել ոչ զրահապատ բանակի դէմ, այլ աւելի մութ, աւելի խաւար բանակի մը դէմ, որ որմզգական հուրն հայ հողի վրայ կը խրոխտար վառելու։ Կրօնական մոլեսանդրութիւնն է որ զՊարսկա կը մղէ Հայոց դէմ, ոչ ազգին այլ նորա կրօնըին²։ Աւստի Մեարովք իւր ազգի կրօնըն ուզեց ամրապնդել և բրիստոնէութիւնն զօրացնելու համար հարկաւոր համարեցաւ ստեղծել զիր և զպրութիւն, հայ-

1. Կորին, էջ 13։

2. «Եւ բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ, որ ոչ ընդ նոզին օրինօթ մտանէին» Եղիշէ էջ 11. բովանդակ զերբն։

կական մատենագրութիւն. զի Ա. Գրոց ծանօթութիւն՝ հիմն է հաւատոյ վարդապետութեան։ Քաջ ըմբռներ էր Մեսրովք քրիստոնէական կրօնից ներշնչած և ազնուական վեհ և ազատ գաղափարները. քրիստոնէութիւն և ազգութիւն համերաշխ կընան ապրիլ, և այդ երկու գաղափարները մարդու մտքի խաղաղութիւնը չեն վրդովեր, սիրտը երկուցի չեն բաժաներ։ Հայաստանի այն ժամանակի դիրքը և պարագաները կը բռնադատէին զօրեղ զնել մի միայն քրիստոնէութիւնն, որ իրեւ վահան լինէր ազգային պաշտպանութեան, մինչ այլ ուղղութիւն չար ևս պիտի զրգուէր չարասիրտ թշնամին, իրըն քաղաքական շարժումն դէպ ի ապօստամբութիւն ընդդէմ արքայի իշխանութեան։ Համանման վիճակի մէջ էին նաև քրիստոնեայ Վրաստանն և Աղուանիստանն. մազդէզի կրօնըն հոն ևս իւր արքանեակներն սկսել էր զրկել. բիրտ ուժի առաջ ակամայ իսկ պիտի խոնարհէին. ասոնց մէջ նոյնպէս քրիստոնէութիւնն զօրեղացնելու համար հարկաւոր էր զիր, ուսումն, դպրոց և Ա. Գրոց զիւտութիւն, ուր առաջբնութեանց ամեն օրինակներ կան։

Մեսրովքին յայտնի էր այդ երեք ազգաց, Հայոց, Վրաց, Աղուանից ազգայնական նախանձն և խուլ մրցումն առաջնութեան համար. հետեւապէս քաղաքական հողի վրայ մերձեցումն թող որ անկարելի էր, այլ և վտանգաւոր և սխալ պարագայի մէջ պիտի զնէր զՀայս. ուստի նա ջանաց այդ երեք ազգերից կապել և կազմել մի դաշնակցութիւն՝ քրիստոնէական եղբայրութեան գաղափարով։ Ահա նա այնուհետև իր կեանըը և ճիզզ պիտի նուիրէ այդ փայտփայած գաղափարի մարմնացման։ Ուստի նա կրկին տեսակաւ կը հրաժարի տարածումն անելու իւր ուսման բուն Պարսից բաժնի մէջ. առաջին՝ որ նրան զուցէ արզիլուած էր ներգործական մի դեր կատարել այդ բաժնի Հայոց մէջ, ուստի անոր ուսուցումն և վարդապետութիւնն կը թողու յօժարաբար Տէր Եպիսկոպոսին, այսինքն Ա. Սահակայ, ուսուցանելու այն տեղերն ուր կայանք բազառարաց էին¹. երկրորդն՝ որովհետև ոչ ոք քան թէ ինքն բաւական էր իւր յղացած ծրագիրն իրագործելու նախապէս ծանօթ լինելով ամենայն իշխանաւորաց. և միանգամայն Հայաստանի սահմաններէն դուրս գործելով, իւր ներքին խորհրդոց և նապատակներուն ոչ ոք կընար հասու լինել այն լրտեսներուց, որք բռնապետական իշխանութեան կոյր գործիք են մեծ մարդկանց դարաններ լարելու համար, որոնց կը մարտնչին անոնց եղերական սկզբունքներուն և հրամաններուն դէմ։

Մեր կարծեաց ստուգութիւնն կը հաստատուի, հիմնուելով կորեան ասածների վերայ՝ հետեւալ երկու զիտողութեամբ. առաջին ոչ Վրացիք և ոչ Աղուանը երբէք մտարերած են ինքնարերաբար իրենց առանձին զիր անենալու. երկրորդ որ Մեսրովք անկախ հետեւելով իւր մտածու-

1. Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշթոց որպէս զի Տէր Եպիսկոպոսն կայենականան և նա ի սփիւս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն. Կոր. Էջ 14.

թեան, ինքնարերաբար կը ստեղծէ վրացերէն և աղուաներէն այբուբենն չեւ գնացած այդ երկիրները: Եւ յիրափի յետ պատրաստելու ըստ կարգին վրաց գրերն, Մեսրովը իւր լաւազոյն աշակերտներէն ոմանք հետն առած կ'ելլէ կ'երթայ վրաստան և թագաւորին կը ներկայանայ և իւր արաւեստն բացատրելով կը յորդորէ ուսանել, մինչև յանձն կ'առնուն Մեսրովի խնդիրքը կատարել: Զարմանալի եռանդ, սովորական մարդկանց հասողութենէն պարձր բմբռնումն, դիւցազնական քաջազործութիւն, ինքն Մեսրովը գնացնը անձամբ կը խնդրէ որպէս զի ընդունին իրենց համար պատրաստուած այբուբենն: Ճիշդ այնպէս ինչպէս բժիշկը հիւանդին շուզած դեղը կու տայ, փափաքելի առողջութիւնն գտնելու համար: Եթէ հայ լինէր պատմազրողն, թերեւս չափազանցութիւն համարէինք, բայց այդ ասողն ինքն վրացի է ազգով և եպիսկոպոսական վիճակին հասած կորիւնն է գրողն, Վարդապետի կրասեր աշակերտն, որի առանձին ինամքը վայելել է: Ինչ էր Մեսրովը նպատակը, կազմել մի և ուժեղ վրաստան, միացնելով գրագիտութեամբ զանազան լեզու իսոսոյ կովկասու բնակիչն ի մէկ կրօնը և ի մէկ ազգութիւն: Թաւզաւոր և եպիսկոպոս ամեն կողմերուց կը հաւաքին մանկտի և կուտան Վարդապետի ձեռքը, «զոր առեալ արկանէր ի բովս վարդապետութեան և հոգևոր սիրոյն եռանդեամբ... յայնչափ ի մասնաւոր և ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարաբառ պատզամօքն մի ազգ կապեալ»: Մեսրով իր նպատակին հասած էր:

Աւելի բնորոշ է Աղուանից նկատմամբ Մեսրովը հետաքրքրութիւնն. մինչ յունական կողմն կը ծաւալէր իւր ուսումն, դէղը մի կը բերէ ուրով կը պատահի աղուան ազգաւ թենիամին մէկի հետ, իսկ և իսկ աղուան լեզուին վրայ տեղեկութիւն կը հարցանէ, և ձեռնամուխ կը լինի այրուբենն յօրինել կարգել, այնքան հեշտութեամբ իրրև թէ գրոց գիւտի շնորհն ի վերուստ իրեն պարզե մ'եղած է²: Սակայն չի յանձներ աղուանին իւր պատրաստածն, այլ յանկարծ պէտք է անձամբ երթայ ծանօթանայ և ծանօթացնէ աղուանից իրենց համար իւր պատրաստած գպրութիւնն. ուստի ի դարձին առ Ա. Սահակ չի ուշանար, հապճեպով կը մեկնի վայրկեան մը չկորցնելու, այնքան հոգին կը վատէր զինքն այդ ազգն ալ զրագիտութեամբ յօդել կապել Հայոց հետ, լուսաւորել անոնց իսաւարեալ մտքերն, նենզամտութեամբ ծզուած նետերէն զզուշանալու և փնտուելու միահամուռ միութեան մէջ իրենց ոյժն և փրկութիւնն: Մեսրովը յունական բաժինէն փութացեր եկեր էր Վաղարշապատ ներկայ լինելու նոր թագաւորի Արտաշէսի թագաղբութեան. հանդէսներ

1. Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ իրատէր յորդորելով. յորում և յանձն առեալ ամենեցուն զինթորիիմ կատարել: Կոր. Էջ 15:

2. Յայնմ ժամանակի եկեալ դիլպէր նմա այր մի երէց աղուան ազգաւ, թենիամէն անոն, և նորա հարցեալ և քննեալ զրաբրաբոս բանս աղուաներէն լեզուին, ասեէր ապա նշանազիրս, ցատ վերնապարզն կորովի սովորութեան իւրում... Կոր. Էջ 18:

վերջանալէն յետոյ իսկոյն հրաժեշտ տալով Հայրապետին և թագաւորին, կ'իջնէ զէպ ուղիղ Աղուանիստան։ Սիրալիր ընդունելութիւն կը գտնէ թէ թագաւորէն և թէ Եպիսկոպոսէն, որոց հարկաւ ծանօթ եղած

QUI BONAN NEC
PUIARE NECA P
PELLARE SOLEAT
QUODEARUM
RERUMUID.

(Onciale latin) Աբձանառ զրութիւն Պ. դարու (Երկիջեան մատեաններ զրելու համար)

ΤΩΒΑΣΙΛΕΙΤΟΓΡΑ
ΓΜΑΚΔΙΕΠΟΙΗΣΕ
ΟΥΓΦΩС
ΚΛΙΑΝΘΡΩΠΟΣΗΝ
ΙΟΥΛΛΙΟСΕΝCOΥ
СОІСТНПОЛЕІКАІ
ОНОМААҮТВМАР
ДОХЛАЮСОТОУГІАІ
РОҮТОУСЕМЕЕІОУ.

(Onciale grec) Աբձանապութեանց համար զործածուած նախապէս՝ տպա անցան սաւահաններու զրութեան։ (Ախնայի Ա. Վրոց օրինակէն Ե դարուն — Երկիջեան մատեաններ զրելու համար)

Մինելու էր, երբ զինուորական և քարտուղար էր ի դրան արքունի։ արդ իրեւ Վարդապետ հիւրընկալելով յանուն Քրիստոսի, չեն կարող թազցնել նաև իրենց զարմանքը և կը հարցանեն զարուն պատճառը։ Այն ատեն Մեսրովը իրենց առջեր կը զնէ բերած զիրը և կը բացատրէ զալուն նպատակը։ Աստ ես թագաւոր և Եպիսկոպոսն յանձն կ'առնուն

Մեսրովի առաջարկն, և կը հրամայեն ժողովել բազմութիւն մանկանց յուսումն նոր դպրութեան։ Պէտք է երևակայել թէ որքան կատարեալ էր Մեսրովի պատրաստած այրենաբանն, որ Երեմիա Եպիսկոպոս իսկոյն կը ձեռնարկէ Ս. Գրոց թարգմանութեան։

Ա Բ Գ Դ Ե Է Ը Ռ Ի Ւ Խ Կ Ղ Մ Մ Ո Պ Ո Ս Վ Մ Ր

Ահճատառք Ե գարու (արձանագրութիւնը և երկիչեան մատեաններ զրելու)

Թող ներուի մեզ հարևանցի հոս փակագծի մէջ ասենք որ Աղուանից այբուբենն յայտնի չեն թէ ի՞նչ կադապարի էին. բայց վրաց գիրն կայ և ունի իւր յատկանիշն որ ցոյց կու տայ թէ Մեսրովի որքան մօտեցած էր մինչեւ ի Հնդիկս տարածուած գրութեանց սիստեմին, որով հեշտութեամբ կը ձեէր և կազմէր Աղուանից և վրաց գրերն, ունելով նախատիպ աչքի առաջ փոքր ի շատէ վեր զրուած օրինակներու ժամանակակից նմուշներից¹:

Մեսրով Աղուանից դպրութիւնն կատարելապէս սովորեցնելէն և յարդարելէն յետոյ, տեսնալով որ այնուհետեւ կարող են իրենք իրենց յառաջ տանել և զարգացնել սկսած գործը, իւր աշակերտներէն զոմանս վերակացու թողլով, ինքը շրջան մը կատարելով Գարզմանից գաւառէն, անցնելով Վրաստան, կտրելով Տաշրացւոց երկիրը կ'իջնէ իւր սովորական տեղերն, Այլարատեան զաւառն, ողջոյն և աւետիս տանելով առ Ս. Սահակ, և որոց պատահէր, անակնկալ և զարմանալի բաներ «պատմէր նոցա վասն այնր ևս նորագործ իրաց²»։ Արդարե նորագործ իր էր, զոգցես զիւթական զաւազանի զօրութեամբ «անդէն յական թօթափել վայրենամիտ և զատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից³» տեղեակ և զիտուն առնել ճին և նոր կտակարանի, Քրիստոսի վարդապետութեան։ Այս Մեսրովայ երկրորդ յաղթանակն էր որով ամուր պարիսապ կը բաշէր հեթանոսութեան դէմ։

* * *

Այս յաղթանակաւ արշաւանքն և զիտական նուաճումներ հարևան ազգերու, դեռ սակաւ են Մեսրովի անսպառ եռանդեան և անշէջ ծա-

1. (Տես ծան. 1, էջ 133 Onciale Մեծատառ գրերու մասին):

2. Կոր. էջ 20:

3. Կոր. էջ 19:

բաւոյն լուսաւորելու շրջակայ աշխարհներն. նորա սրտի վերայ ծանրանում է մի քար, և հարկ է որ այն ևս հալի և լուծուի իւր բորբոքեալ սրտի բոցերու մէջ։ Այդ հեղձուցիչ ծանրութիւնն էր Հայոց աշխարհի կէսն, որ Յունաց տիրապետութեան տակն էր, և զրկուած էին շնորհատուր երկնապարգեւ զպութենէն։

Յունական կողման Հայք, «չ միայն քաղաքականապէս բաժանուած էին մեծ մասէն Հայոց, այլ որ ցաւալին էր, Հայոց Հայրապետին ևս արգիլած էին եկեղեցական իւրաւասութիւնն տարածել այն մասի հօտի վրայ. որով նորա զրկուած էին թէ իրենց լեզուէն՝ և թէ ազգային եկեղեցական ծիսէն, և ի վտանգի կորցնելու ազգութիւն և լեզու։ Ս. Սահակ կանխաւ փորձել էր իւր իրաւոնքը բանեցնելու, սակայն երկրին կառավարիչը յանուն կայսեր իշխանութեան, արգիլած էր նորա մուտքն և իշխանութեան գործազրութիւնը։ Մեսրովքայ զրոց գիւտն յարմար առիթ կ'ընծայէ նորոգելու իւր խնդիրը։ Աւատի զՄեսրովք յանձնարական թղթերով¹ կ'ուղարկէ ի Բիւզանդիոն։ Ս. Սահակ դառնապէս զանգատի թէ «ոչ հանդիպեցայ ընդունելութեան յիմում վիճակիս ի հրամանէ վերակացուացս սոցա»։ սա զեռ բաւական չէր, ատելութիւնն այնքան մեծ եղած է «մինչև զնշանազիրս անգամ ոչ ընկալան»։ և ապա խնդրէ «ոչ անիշխան առնել զմեզ ի մերումս վիճակի» ևն։

Զնայած որ Սահակ և Մեսրովք նախածանօթ էին Բիւզանդիոնի արքունեաց, և նուիրակներն խոնարհական թղթերով կը ներկայանան իշխողաց, այնուհանդերձ ոչ Սահակ և ոչ Մեսրովք կը խուսափեն յունական նախանձէն և կեղերող յանդիմանութենէն թէ ինչո՞ւ առ Յոյնս չէին դիմած Գրոց գիւտի համար, այլ ծանծաղ ասորի գիտութեան։ Բայց բուն պատճառը այդ չէր, այլ ներքին քաղաքականն, զի Յունաց սիրելի չէր որ Հայք Պարսից հակէին, խաղաղութեամբ ապրէին, վասն զի Վասահապուհի խաղաղասիրական և հաւատարիմ ծառայութիւնն արքայից արքային, բերաւ Հայաստանի երջանկութիւն, զարգացումն. քաղաքակրթութեան ճանապարհի վրան կանգնեցան Հայք իրենց առանձին սեփական զրով և զրականութեամբ, զայն չէին ուզեր յոյներն, կամէին Հայաստանի խոսվութիւնն որպէս զի իրենց առիւծի բաժինը վերցնէին, ցանկային որ Հայք մասյին կուրութեան մէջ, որով իրենց համակրութիւնն կը շրջէր գէպ ի յոյներն, և յուսային ապահովել իրենց սահմանները։ Այս մտածութեան արտայայտութիւնն է որ կը լսենք թէողոսի բերնէն խրոխտ և տիրահարաման ձեռվի, «վասն որոյ հաճեալ էաք ընդ մերոյ ծառայիցդ արհամարհել զայսափիսի ուսմամբդ²»։

Այս արհամարհական կերպէն պահ մը տագնապած պիտի լինի Մեսրովք, որ իւր պատգամաւորութիւնը զատարկ անցնի. բայց նա զիտէ հեղծութեամբ և իմաստութեամբ խաղաղել ներքին ալէկոծութիւնն

1. Խոր. զիրք Գ. Ա. Ծէ։

2. Խոր. զիրք Գ. Ա. Ծէ։

Հայկ. Յորելեամ

և հմտութեամբ տանել իւր նաւն ի նաւահանգիստ։ Մեսրովը իւր համբաւոյն բարձրութեան վրայ կանգնած, զիտէ ամփոփել իւր ոգոյ մեծութիւնն և զոհել իւր փառքն հայրենեաց սիրոյ համար. և կատարեալ ուրացութեամբ իւր բոլոր ջանից և արդեանց, օտար երկրի մէջ, օտար ժողովրդեան և թագաւորի առաջ կը հրատարակէ ի լուր աշխարհի թէ զրոց գիտն մարդկային ճարտարութեան գործ չէ, այլ Աստուծոյ շնորհցի տուրքն է, վերնական պարզ մ'է, հրաշքի գործ է։ Այս վեհանձն յարտարարութիւնն կը կակդէ թէողոսի սիրտն, և ուսուցանելու հրամանն կ'արձակէ։ «Բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրովը թէ կատարում արուեստիդ ի շնորհաց վերնոյն եթեւ, զրեցաք զի ամենայն փութով ուսցին¹»։

Արգեօք ներկլի² է ենթազրել թէ հրաշքի պատմութիւնն և «թաթն աշոյ ձեռին զրելով ի վերայ վիմի» եւն մտածուած է ի Բիւզանդիոն, յունական նախանձէն ազատելու համար. և յաջողեցնելու իրենց խրնդիրներն, որոց համար եկած էին։ Արդարեւ հրաշք է հաւասարապէս յունական չարութեան և ատելութեան շիջումն. որք այնուհետեւ կը փոխանակեն սէր և անպայման համակրութիւն, առ անձն և առ զործն. զարմացումն և հիացումն շնորհալից կերպարանացն՝ որոյ վերայ ցոլանայր սրբութեան և զիտութեան լոյսն, անբաւ խոնարհութիւնն, յորմէ վերնոյն պարզեւ համարեցաւ զրոց գիտն և արուեստն ուսուցչութեան, «հրաման ելանէր վայելուչ մեծարանօք զԱսուրքն՝ Ակումիտ անուն կոչէլոյ³»։ Յարգելով նաև Ա. Սահակայ խնդիրն, հրաման կը տրուի պատուվ ընդունել զինքն «որպէս զարդարեւ վարդապետ իւրեանց (հանգոյն արքեպիսկոպոսին կեսարու) և դարմանք և ծախիք յարքունուստ եղիցին³»։

Այսպէս ուրեմն յաջողութեամբ պասկեցաւ Մեսրովքայ պատգամատորութիւնն։ Բայց Խորենացոյ մի բանն մթին կը մնայ որ այս մասին կը զրէ. «առին զոր յուսայինն և զոր ոչն յուսային»։ Ի՞նչ էր արգեօք Սահակայ և Մեսրովքայ յուսացածն և ոչ յուսացածն։ Յուսացածնին թուր Մեսրովքի ուսուցանելու հարցն էր, որի մասին արդէն համբաւն հոչակուեր էր յունական բաժնի մէջ, ուր շատ իշխանաւորաց և եպիսկոպոսաց՝ աշխարհական վարքի մէջ եղած առենէն ծանօթ էր,

1. Խոր. զիրք. Գ. զւ. Ծլ. Հայկական զրոց ծագման մասին արժան էր առանձին խօսել. սակայն ներկայ յօդուածն իրեւ վարքազրութիւն նկատելով, նշանակեցինց լոկ ընդհանուր զծեր, առանց իջնալու մանրամասնութեանց, զանց առնելով համեմատել առանձնակ զրեռու առնչութիւնն օտար զպութիւններէ առածների հետ։ Այսչափս յայտնի է ամեն ընթեցասիրաց որ Մեսրովք յանեղեց ոչնչէ Հայ ալֆարեան, այլ վաղնջոց զանուած զլիսաւր երեք ճիւղաւորման տիպարի զպութիւններն ճարտարմատութեամբ կամցեց իւր այրուենն, նոր ձայնական անուանումն տալով փոխ առած զրեռուն, որք թերեւ նախակաղապարի մէջ այլ հնչումն և զօրութիւն ունեցած են։

2. (Կկումնն ?) Կորին էջ 16.

3. Նոյն և Ատամիկոս զրէ. «արդ հրամանաւ ինքնակալին Աւգոստոսի առեւեալ լիցի քեզ իշխանութիւն վարդապետն զկողմնի մեր»։ զւ. Ա. Ա.

ուստի անոնց միջնորդութեամբ կը յուսային յաջողիլ հրաման ընդունելու, նա մանաւանդ որ «հիւսիսական կողմանց հոչակելոց» վրաց և Աղուանից մէջ արագ տարածումն զրոց գպրութեան, յունական ազդեցութեան աւելնաւուն հրապոյր մ'էր, որով Մեսրովքի միջոցաւ միայն կը յուսային յաջողիլ և ձգել ի միութիւն գէթ ըստ կրօնականին: Իսկ որ ոչն յուսայինն, էր ինպիր Ս. Սահակայ, վերահաստատելու իւր հովուական իշխանութիւնն այն կողման վերայ, ուր կեսարիոյ աթոռն արդէն տարածեր էր իւր թերեն. և թերես հակառակ էին եպիսկոպոսներէն ու մանք, որը նախամեծար ընտրէին հպատակել թիւզանդիոնի «ինքնազլուխ» պատրիարքին քան փոքր աշխարհի մի կաթողիկոսի: Այս հրամանը ձեռք բերելու համար երկու խոչընդուաներ կային, մին թագաւորական՝ միւսն պատրիարքական իշխանութիւնը. հարկ էր նախ հաւանութիւն առնել կայսերէն, ապա հաճութիւն պատրիարքին. ահա այս չյուսացածն եւս կ'ընդունին: Թիւզոս կը հրամայէ կեսարու արքեպիսկոպոսին հաւասար պատուվ ընդունել և յարցունուստ հոգալ ծախսերը: Իսկ Ատարիկոս նոյնպէս «հրամանաւ ինքնակալին» իշխանութիւն կուտայ Ս. Սահակին «իւր կողմը» այսինքն վիճակին մէջ վարդապետելու:

Ինքնազլուխ Պատրիարքն իւր ճոխութիւնն ցոյց տալու համար, ըզ-Մեսրովք, կը ձեռնազրէ եկղեսիաստիկոս: Մեսրովք ցայն վայր ձեռնազրութիւն չէր ընդունած, այլ միայն արեղայ էր, և Ռւսուցողի պաշտօն յանձնուած էր իրեն Ա. Սահակի կամքով. մինչ եկեղեցական նուիրապետութեան կամ ժառանգաւորաց մէջ մտնելու համար հարկաւոր էր ունենալ մի որ և է եկեղեցական պաշտօն, սկսած փոքր աստիճաններու մինչև մեծերը, և զայս առանց յատուկ օրնենորեան կամ ձեռնազրուց թեան կարելի չէր ընդունել: Ռւստի Ատարիկոսի «եկղեսիաստիկոս»ը պէտք է հասկանալ որ Մեսրովք այդ ձեռնազրութեամբ եկեղեցական աստիճան մի ընդունեցաւ և անցաւ ի շարս ժառանգաւորաց Պատրիարքի Նուիրապետութեան, որով համարձակապէս կարէր իւր արուեստն ուսուցանել հայ մանկուոյն «այնը կողման»: Այդ ձեռնազրութեան միջոց նոյն իսկ թուի նոր անուն մ'ես ընդունած է Մեսրովք, կորեան այս աղաւագ բացատրութեամբ «հրաման ելանէր, վայելուչ մեծարանօք զԱռուրն (Առկումիտ) անուն կոչելոյ: Այսոր ածականն ենթազրել կու տայ իւր գոյականն, եթէ ինքն իսկ մի գոյականի աղաւագումն չէ: Քանզի միտ գնելով Խորենացու զրածին «զի գոյր տեսլեամբ հրեշտակական, զործովք մարմուկ արտափայլեալ, սարասիւր անճառ» ևն այդպիսի տպաւորութիւն թողլով Ատարիկոս հայրապետի վերայ, ի՞նչ աւելի յարմար կը տեսնար իւր հրեշտակակերպ ձեռնազրելոյն քան Առուրն (Առուրն)¹ անուն կոչելոյ մեծ Ռւսուցչին, որ «ոչ որպէս արուեստ ուսուցանէր այլ իրրե զնողի առաքելաբար աշակերտելոցն տայր»²:

1. Ա. Մեսրովքայ փոքր վարուց մէջ ասուած է «Արովքատեսն անուն»:

2. Խոր. զերը Գ. զւ. Կ.

Սակայն ըստ ամենայնի չէ մարդի հաւասարեաւ ասել թէ Ատտիկոսի ձեռնազրութիւնն սուրբ աստիճան տալն եղաւ, զի յառաջ քան զձեռնազրութիւն Ա. Սահակ Ռևուցող մերոյ աշխարհի կոչէ, իսկ ձեռնազրութենէ յետոյ վարդապետ, իբրև առանձին իմն շնորհ կայսեր հրամանաւ եղած: Վարդապետական աստիճանն իբրեւ Մագիստրոս եթէ տրուած է, հապա Ատտիկոսի ձեռնազրութիւնն ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ: Արդեօք լոկ մի ձեւ, մի արարողութիւնն էր, առանց սուրբ կնիք տալու, ինչպէս առ լատինս կոչին երբեմն Արքայք, աշխարհականը ումանք, որ ունին հերակտրութիւնն և սև պարեգոտն և ընդունին հասոյթս եկեղեցիէն, սակայն ոչ մի կարգ չունին և ոչ ձեռնազրութիւնն: Եթէ այս շափը համարինք Ատտիկոսի եկղեսիաստիկոս ձեռնազրութիւնն, մեծ բան մը չէր և չ'արժէր պարծենալ և գրել առ Ա. Սահակ, իբրև մի մեծ վարժատրութիւնն մը արած այն մարդուն՝ որոյ ձեռամբ «Ամենակալն ըղիսեաց զշնորհս Հոգւոյն»: Այլ յօժարեալ եմք կարծել որ Մեսրովք առանձին տնօրինմամբ ընդունած է հոգենոր ձեռնազրութիւն: Առանձին տնօրինումն ասեմ, վասն զի երանելի վարդան կամ Վրիկն, վերը ասացինք՝ հարճորդի էր Պապայ և Հայր Մեսրովքի. արդ եկեղեցական կանոննը կ'արգելուին ոչ միայն պոռնկութենէ այլ նաև երկրորդ ամուսնութենէ ծնածներն չձեռնազրել: Այս կանոնն ընդունած է նաև Ա. Սահակ «Յաղագս քորեպիսկոպոսաց» զիմոյն մէջ: Կանոն Ը այսպէս է. «իսկ զպոռնկորդիս և ոք յերկրորդաց են հաւասար մինչեւ յերրորդ ծրնունդն, ըստ առաջին կանոնաց հետի կացցեն ի կարգէն և ի շնորհացն¹»: Թէպէս Մեսրովք «պարկեշտ և սուրբ լինի, զարդարուն ճշմարիտ հաւատովք և գործովք առաքինութեանց, ցանկալի ամեննեցուն և պատուական, որպէս վայել է պաշտօնէից Աստուծոյ» (անդ) սակայն ոչ Ներսէս և ոչ Սահակ արքեպիսկոպոսնք Հայոց, պիտի կարենան ձեռք զնել իրենց ազգականի վերայ և կոչել քահանայական պաշտօնի: Եթէ ծնընդեան թերութիւնն չլինէր, ուրիշ ի՞նչ պատճառ կարող էր արգելը լինել Մեսրովքի ձեռնազրութեանն: Թերեւս պիտի ասէք, որ ինքն չէ ուզած, առ խոնարհութեան հրաժարել է: Բայց թող մի անգամ մտածէ թէ Ա. Ներսէս ի՞նչ հանգամանքներու մէջ ձեռնազրուեցաւ և բռնադատեցաւ մտնելու եկեղեցական վիճակ.² Նոյն բարուց մարդիկ, նոյնպէս պիտի վարուէին Մեսրովքի հետ, բռնի ձեռնազրութիւն ընդունել պիտի տային այնոր որ «գերազանցել էր քան զամենցն որ այն ժամանակ առաջինիներ կային»: Սակայն չարին այդ բանն Մեսրովքին, զի յայտնի էին ժողովոց կանոններն, որք ընդ նզովիւք ձգէին ձեռնազրովը և ձեռնազրեալը: Բայց երբ կը հասնին կոստանդնուպոլիս, ամենցն ականա-

1. Առիքը. Կան. Ա. Սահակայ:

2. Եւ հրաժարէր զնա կապիլ զիւրով զարաջեաւ... հրաժան տայր և բերին զհանդեմ կղերեկոսաց զգեցուցանէին նմա... և տայր ձեռնազրել զնա ի սարկաւագութիւն. (Բուզ. Դպ. Գ. Ա. Գ.)

տես լինելով Մեսրովբայ հրեշտակական վարուց, խոհական իմաստութեան, և հոգևորաց մեծ գիտութեան, քարոզութեանց, թարգմանութեանց, և այլ բազում վաստակոց լուսաւորութեան երեք աշխարհներուն, և նաեւ տոհմային ազնուականութեան¹, և մանաւանդ շնորհը մը կամենալով անել Ա. Սահակայ և Հայոց, ինքնազլուխ պատրիարքն Առտիկոս իւր իշխանական ճորութիւնն ցոյց տալու համար, Մեսրովբին երկրորդ ծնունդն կը տնօրինէ և կը ձեռնազրէ գոնէ ի պաշտօն Սարկաւագապետութեան, եթէ չասենք ի քահանայութիւն։ Ես յօժարեալ եմ դեռ աւելին յուսալու մի հայազգի ինքնազլուխ և Տիեզերական Պատրիարքէն։ և կորեան Եկղեսիաստիկոս բառին մէջ ուզում եմ նշմարել Քորեպիսկոպոսութեան աստիճանն և պաշտօնն առ որ կոչեց Առտիկոս, յանձնելով նմա իւրակողման հայոց ուսուցանելու դպրութիւն և նաեւ տեսչութիւն եկեղեցական Բարեկարգութեան՝ իրրեւ զինքն ներկայացուցչի կամ տեղապահի։ Եւ ձեռնազրութեան շնորհիւն է որ նա կարող կը լինի Ա. Սահակի մահուանէն յետոյ, տեղապահութեան պաշտօնը վարել, որ բնականարար յինքն կը պարունակէ սրբազն կարգն, գէթ աստիճան քորեպիսկոպոսութեան, զոր Ղազար Փարպեցուն անգամ թշշնամիքն արժան չէին տեսած։ իրրեւ արժանաւոր հոգեորականի մի եկեղեցական վարձատրութիւն առանց ներգործական դերի նուիրապետական պաշտօնավարութեանց մէջ և որ կարելի էր ընդունել նաև աշխարհական իշխանութենէ²

*
* *

Մեսրովբ, ինչպէս ասացինք, որոշ նպատակաւ ձեռք զարկաւ զրոց զիւտին։ յետ այնորիկ իւր զաղափարը սերմանեց Հայոց, Վրաց ու Աղուանից մէջ, քարոզելով միութիւն ըրիստոնեայ եղբայրութեան, համերաշխ գործ ընդդէմ պարսկական ոտնձորութեանց՝ կապել մի զաշնակցութիւն սուրբ, պատերազմելու զինու զօրութեամբ արքայից արքայի գէմ, Եկեղեցւոյ ազատութեան, ինքնապաշտանութեան, հայրենեաց և ազգի պատուոյ համար։ Զարթուցանել լոկ զիտակցուրիւնն իւր գոյութեան պաշտամութեան համար, յայդ կը ձգտէին զաղափարական մարդու բոլոր ճիգերն, տասնամեայ հսկումներ, ճանապարհորդութիւնք, քարոզութիւնք։ և վերջապէս տեսաւ Մեսրովբ իւր ազարակն կանաչացած, սերմանիք բուսել էին և սկսել աճել, ժամանակի կարօտէր հասունանալու և պը-

1. Հին Հռովմէտական կայսերական օրէնք արգելուին հարուստ ժողովրդական, ճորտ կամ գերիներն ձեռնադրելու. պէտք է յաղատաց լինէր, նախապատուութիւն տալով ազնուականութեան։

2. Քանզի յաղագ ատելոյ զիս, թերեւ արդեօս և ըստ անարժանութեան, սուրբքոյ և անարժագ և յամնայն մեղաց ազատ ուսուցիչք Հայոց, թո՞դ ի մեծամեծան ձգտեցուցանել զին յեւ պիսկոպոսութիւն և կամ ի նոցին յառաջին զգաստութիւն, և կամ յեկեղեցւոյ զատաւորութիւն։ այլ և քորեպիսկոպոս ոք չարար, զոր Պարսիկը և արք անարժանք զործին և յայօր, (Ղազար էջ 586)։

տուղ տալու, այդ ժամանակն շատ հեռու չէր: Պարսիկներ չէին ընաւնար¹, ականատես եղան հսկայ յառաջդիմութեանն. իմացան որ ուրի տակի հողն սկսել էին կորցնել, նոր կայտառ սերունդ մը ասպարէզի վրայ՝ քրիստոնէութեանն հաւատքն իրենց վարքով ու քարոզութեամբ ամրացուցեր են. յարգելի ոյժ մը արդէն կազմուեր է, որ ի գէպս հարկին կարէ խիզախմել ընդդէմ Արեաց արքային սպառնական նամակներուն և զէնցերուն. կանգնել են իրեն դէմ նահատակներ որք զմահ առաւել պիտի ընտրեն քան կեանքը, երբ Քրիստոսի սէրն ստիպէ արեամբ չափ իրենց հաւատքն և հայրենիքն պաշտպանելու: Վկայ են բանիցս վրաց և Աղուանից և Աւարայրեան դաշտերն: Յազկերտ վիշապօրէն զազանացեալ՝ պարսիկ վտանգն, Մոգերն, անհամար բանակաւ կը յդէ երեք քրիստոնեայ աշխարհներ. բայց բուն նպատակ իրենց զինուց Հայրն են. ասոնց կոտրուելով միւս երկուքն համեղ պատառներ են Պարսից², սոքա ևս զգալով իրենց տկարութիւնն կը փութան պատսպարիլ Հայոց վահանի տակ: «Պատգամաւորութիւն այնուհետեւ երերին աշխարհն առ միմեանս առնէին և ուխտազրութիւնս, և բազում երգմամբ աւետարանին հաստատէին³»: Մեծ Աւուցիչն հասել էր իւր երկրորդ նպատակին, և սրտի ուխտն, կատարուած էր:

Զարիմաց Միհրներսէ թելազրութիւն կ'անէ Յազկերտի որ զէնքի տիրապետութիւնն Հայաստանի վրայ խախուտ և անկայուն է, մինչեւ որ Հայք Մազզեղանց կրօնքն չ'ընդունին և սերտիւ կապուին Պարսից հետ. ուստի այդ ուղղութեամբ կը սկսի կոփին, որին Հայք կը պատրաստուին դիմազըելու հոգեւոր պատերազմով: Սակայն այս զաղափարն նոր չէր, այլ Շապուհ առաջնոյ ժամանակէն, երբ Հոռվմայեցւոց հետ կիսեցին զՀայաստան, պարսիկ հերամուտ եղան ջնջելու զբրիստոնէութիւն Հայոց աշխարհէն: Առաջին գործն եղաւ արգիլել Հայոց ուսանել յունական դպրութիւնն և չյաճախել յունական աշխարհի լուսաւոր կեղրոններն⁴: Նախ Մերուժան և ապա Վարազվազան, ուրացողներ, հակառակ իրենց հայրենեաց և եկեղեցւոյ այնպիսի չար խորհուրդներ կու տան Պարսից, զոր նոքա բնաւ իսկ չեն խորհած⁵. պակասութիւնն մը որ ամեն զարու և ամեն ժամանակի մէջ կը կրկնուի ի վնաս Հայ ազգի և եկեղեցւոյ շահերուն: Ասոնց տուած թշուառ խորհուրդն էր ջնջել ամենայն յոյն

1. Փանզի տեսանէր զբրիստոնէութիւն՝ որ օր քան զօր յորդեալ տարածանէր ընդ ամենայն կողմանս հետաւոր ճանապարհն ընդ օր ինքն (**Յազկերտ**) անցանէր: (Եղիշէ էջ 32):

2. Եւ յորժամ Հայք սերաբւ մեր լինին, Աղուանը այնուհետեւ մեր իսկ են: (Փարզ. էջ 113):

3. Փարզ. էջ 132. Եղիշէ. էջ 174:

4. Փանզի նսխի ի Մերուժանայ այրեաւ լինին ընդհանուր աշխարհս յոյն զիրք. դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային Պարսիկ իբրակացուքն յոյն ուսանել դպրութիւնն ուժեց յիւրեանց մասինն, այլ միայն ասոր. զիրք Գ. զւ. ԾՊ:

5. Եւ իմ թէպէտ և էր յառաջազոյն հոգացեալ զայցափարի մեծ իրս.... առաւել ևս հաստատեալ յառնէն որ ի Ախնեաց տոհմէն՝... զոր ի եմանն առելագոյն ծանեայ և հաստատեցի և այլն (Փարզ. էջ 113):

գիրք և զրականութիւն, որպէս զի տգիտութեան մէջ մնալով՝ ընդունին Հայք կրակապաշտութիւնն¹:

Այս յառաջընթաց փորձն մեծապէս ազդեր էր Հայաստանեայց Ե-կեղեցւոյ Մհծ Հայրապետի վրայ և խոր ատելութիւն մը զրոշմել Մես-րովբայ սրտի վրայ. ուստի երբ երկու լուսաւորքն անկախ իրարուց կը խորհէին Հայրենեաց և Եկեղեցւոյ փրկութիւնը, սա եղաւ գլխաւոր շար-ժառիթն զիր հնարելու մտածութեան. այսինքն ստեղծել կազմել Հա-յաստանի համար մի նոր և ճոխ զրականութիւն հոգեոր բովանդակու-թեամբ առաւելապէս, որպէս զի ի հարկին եթէ Հայրենիք չկարե-նայ վերատին ձեռք բերել իւր քաղաքական ազատութիւնն, գոնէ Եկե-ղեցւոյ ծոցի մէջ գտնէ իւր սրտի և մտքի յազուրդն, պատսպարանն և պաշտպանութիւնն. Գիրն՝ այսուհետև պիտի լինի զօդ միութեան և ազ-գային գոյութեան պահպանութեանն ցրուած Հայութեան: Գիրն ոչ ի-մացեալ մահ է, զիրն իմացեալ անմահութիւն է: Սակայն այդ Գիրը կեն-դանի և կենդանատու պահելու համար, հարկաւոր էր տալ այն զրա-կանութիւնն որով զարգանային մողեր, որով ոգիր իրենց հոգեոր ծա-րաւն անցնէին զիտուրեան բացուած ազբիւրեէ². և չկարօտէին պարսկա-կան աւագուտի մէջ ծակեր փորելու մոլար և պղտոր ջրեր իմելու հա-մար: Ահա այսուհետև այս երկու լուսաւորքն Հայաստան աշխարհի, պիտի նուիրեն իրենց ուշադրութիւնն հասունացեալ աշակերտաց ոյժե-րով, վերաստեղծել այդ նոր զրականութիւնն, ճոխ, բազմատեսակ բո-վանդակութեամբ, որով Հայաստան «ցանկալի և անպայման սբանչէլի պիտի լինէր» յառաջամարտիկ կանգնելով տգիտութեան և բարբարո-սութեան հոսանքներու դէմ, պիտի կրէր քաղաքակրթութեան կնիքն և անով պահպանէր իւր գոյութիւնը գարերու բերած հրոյ և սրոյ աւերմանց և կոտորածներու մէջ: Առոր Սահակ տեսաիլըով, ասացինք, տեսեր էր այդ ահաւոր դարերու պատկերն, Մեսրով լայն մտքով ըմբռներ էր և կը հաւատար գալիքներուն. ուստի առաւել եռանդեամբ «Ուշ եղեալ եր-կոցունց Երանելեացն³» իրենց ազգի զպրութիւնն զարգացնել՝ զիւրա-ցնել և ընդհանրացնել: Ս. Սահակ, յորդորմամբ Մեսրովբայ, արքու-նեաց և եկեղեցական դասուն՝ ձեռք կը զարնէ Ս. Գրոց թարգմանու-թեան եօթանասնից ընտիր օրինակէ, զոր բերած է Եզնիկ Նիկիական և Եփեսոսի Ս. Ժողովոց կանոններու հետ, որով ասել է թէ բերուած Ս. Գրոց օրինակն վաւերացածն էր երկու Ս. Ժողովը⁴ն ևս, անոր համար կորիւն «հաստատուն» կը կոչէ բերուած օրինակն: Խակ Խորենացի «Սաոյց օրինակ» ասէ⁵: Խակ միւս թարգմանիչը մեղուօրէն սփուած ասորոց և

1. Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսութենէ: (Եղիշէ էջ 26):

2. Կորիւն, էջ 13:

3. Կորիւն, էջ 20:

4. Ապա եկեալ թարգմանիչը մեր... մատուցին զթուղթն և զկանոնս ժողովոյն Եփեսոսի՝ վեց սահմանեալ կանոնաւ(ց) զլսով և զատոյդ օրինակս զրոց. (Խոր. զիրք Գ. էջ 260):

յունաց աշխահներ, Ա. Հարց գրքերու անթիւ բազմութիւնն հայերէն թարգմանելով կը դրկեն կամ անձամբ կը բերեն Հայաստան: Բայ բանից իմաստոյն ի սակաւուն լցին երկար կեանք. այսինքն այնքան բեղմաւոր եղաւ թարգմանչաց աշխատութիւնն, որ այսօր յիրաւի զարմանք կ'ազդէ մեզ այն գրքերու գումարն, որ հասեր է ձեռքերնիս Ռոկի դարէն, առանց հաշուելու յետազայ դարերու մատենագրութիւնն, որով Հայն յետ Ցոյն և Հոռվմէական գրականութեան, հին ազգերու ցանկի մէջ երբորդ տեղն կընայ զրաւել: Եւ թագմանչաց գործը միայն Հայոց փառքն չի կազմեր, այլ համաշխարհի բնոյթ ունի, օգտակար ծառայութիւն մատուցանելով մարդկութեան և գիտութեան, ազատելով իսպառ եղծմանէ հեղինակներ որոց կորուստն պիտի ողբար մեր զրական դարն:

* * *

Գեղեցիկ և ազնուական արուեստն որուն նուիրեցին զիրենք Ա. Սահակ և Ա. Մեսրովը, երկար էր և բազմարեղուն. իսկ իրենց թանկազին կեանքն սուղ. բայց այս սակաւուն մէջն իսկ երկար դարերու կեանք թողին. բնութեան հարկն պէտք էր վճարել, օրօրանէն ի ընարան մասու հիւանդութիւնն կոչեց զԱ. Սահակ. փակուեցաւ այդ զեղեցիկ օրն: Խորենացու այս հակիրճ խօսքերու մէջ ամփոփուած է ամրողջական դամրանական մը պերճախօս և վսեմ. «Որ մահկանացու ծնեալ, անմահ զիւրն եթող յիշատակ և այլն»:

Վեց ամիս յետոյ կը հանդիպի և փոխումն աշխարհէս Ա. Մեսրովը: Տեսիլ սքանչելի իսաւանման, լուսաւոր շողաձեւ ապարանցի վըրայ կ'երեւի յաւանդման հոգւոյն, և նոյն լոյս յառաջախաղաց զնալով կ'առաջնորդէ մինչև Օշական, ուր կը հանգուցանեն պատուով Սրբոյն մարմինն: Խաչանման լոյսն ամփոփուեցաւ զերեզմանի մէջ, իրեւ վկայ անրարբառ Մեսրովը հաւատոյ և սրբութեան. «Քերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաջինիք²».

Սրբամբարուր մարմնոյ շուրջն բարեպաշտից մրցութիւնն նախանձելի եղած է. կէսն՝ թերեւս մերձաւոր ազգականը՝ կամեցած են տանել ի բնագաւառն իւր Տարօն, յԱշտից զիւղն (Հացեաց զրախուն) ուր վեց ամիս առաջ հանգուցեր էին զԱ. Սահակ. իրերեւ առ իւր ընտանի և ազգական, որք էին ըստ բանից Նարեկացւոյն «իբրեւ զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան լինելոյ զիմաց կենցաղավարելով... միաշունչը միակրօնք, զուգահաւանք, ի քառից աչաց առ մի և նոյն շաւիդ խորհրդոյ տեսեալը³»: Ոմանք ի նախաշակերտած Գողթն, իւր գաստակերտն, սոքա եղած են Արևելաց տան իշխանագունք, երախտաւորեալք

1. Խոր. զիրք. Գ. զւ. կէ.

2. Խոր. զիրք. Գ. զւ. կէ.

3. Կարեկացի. «Յիշատակարան մատենագրութեան» էջ 267. Վենետիկ 1840:

սուրբ Վարդապետէն։ Այլք Վաղարշապատ բաղացի մէջ, սրբոց գերեզմաններու կամ գամբարաններու մէջ, ասոնք եղած են զվարարապէս իւր ձեռասուն աշակերտներն, ժողովուրդն և Նախարարներէն ոմանք։ Բայց այդ տարածայնութեանց մէջ օգուտ բաղողն եղած է Վահան Ամատունին, որ անշուշտ Սրբոյն հանգչելու ժամանակ ներկայ գտնուել է Հմայեակ Մամիկոնէի հետ։ Արդեօք ներելի չէ ենթադրել որ Ս. Մեսրովը փափաք յայտնած լինի Օշական թաղուելու, երեք տեսակէտով։ Աշտիշտատ կամեցած չէ, վասն զի հրաժարած էր իւր տէրութենէն և մարմնաւոր պատուէն, «իրը մոռա զժողովուրդ բու և զտուն հօր բո» — Վաղարշապատ չէ կամեցած, նախ բարեպաշտութեան համար զգուշանալով, «Ի զիրս սրբոց» զրուելու, իրը անարժան, և կամ ապագային երկիւղ կրելով վրէժինդրութեան, բաղացական ձախող ելքի մը Հայոց և Պարսից կոտի մէջ։ Խակ Օշականը Արագածու ստորոտն, Քասաղ (?) զետի ափին զուարթ բլրան մը վրայ շինուած րերդ և դաստակերտ մ'էր Ամատունի տան, առանձնականի սեփականութիւն։ Հոն ուզեց հանգչիւ, ուր կը լսէր Հայաստանի մրմունջն ձորէն անցնող գետակէն, Արագածէն փչած զեփիւոն հովէր սրտի տապը, և աչքերն սեւեռած յեկեղեցին կաթողիկէ, մշտամոռնջ աղօթէր անոր հաստատութեան համար։ Եթէ այդպիսի մի պատուէրի գոյութիւնն տարակոյսի մէջ մնայ, դժուարին կը լինի հասկանալ բառ բոլոր յայնուրեան խմատին կորեան գրածն թէ Վահան և Հմայեակ միայն էին «արք պատուականը և երկիւղածք նրամանակատարք վարդապետին» (Վարդապետին) հրամանաց»¹։ Այս հրամանը, որուն երկիւղած կատարողը են Վահան և Հմայեակ կը վերաբերէր յատկապէս իւր թաղմանը և տեղոյնն, որով Վահան յանձն առած է հոգալ յուղարկաւորութեան ձախոն և վրան «Խորան սքանչելի կանգնել տաշածոյ վիմօք բանդակելով»²։

Խակ Խորենացի մի այլ պատճառ կամի տալ Վահանի ազդեցութեան թէ «Էր զօրաւոր հաւատովը և ճոխութեամբ մարմնաւորաւ» և Հայոց աշխարհի հազարապետութեան պաշտօն կը վարէր այն ժամանակ, որով կարողացաւ բոլոր կուսակցութիւնները լուցնել։ Սակայն բաւական պատճառ մը չէ միայնակ համոզելու միւս երկու կուսակցութիւնն որ կը բաղկանար ամրողջ ժողովրդենէ և եկեղեցական դասէն, որը զրեթէ ամրողջովին իւր ձեռասուն աշակերտցն էին³, և որոց մէջ կային Ամատունին հաւասար և աւելի բարձր բարձով և ճոխութեամբ Նախարարներ և իշխաններ. եթէ սոքա տեղիք կու տան Վահանին, կը նշանակէ որ բան զմարմնաւոր ճոխութիւնն աւելի բան մը կար, որով նախապատուութիւն և իրաւունք Ամատունի իշխանին կը տրուի։ Նախ ասացինք որ մի

1. Կոր. էջ 27։

2. Կոր. էջ 27։

3. Այդ ժամանակ Հայոց բանակն Արտաշատ էր (Վաղարշապատ կամ Կոր Վաղացը) իսկ զօրավարն Վարդան, որին ոչ մի յանձնարարութիւն չի կայ……

հրաման եղած՝ է Ա. Մեսրովքայ կողմէն Օշական թաղուելու, երկրորդ Ամատունին աներկրայապէս ազգակից եղած լինելու է Ա. Մեսրովքայ, միտ գնելով մի քանի պատմական գէպքերու որոց մէջ Ամատունի տան կատարած գերը եղական նշանակութիւն կը ստանայ նկատմամբ Արշակունի թագաւորական և լուսաւորչի տան:

Արտաշէս Բէ օրով սորգ Պարսկաստանէ զաղթին ի Հայս. թէպէտ խորենացին իր սովորութեան համեմատ զասոնք հրէութենէ եկած համարի և Սամսոնի ցեղէն (?) և իր Արշակ Պարթեւ տարած է յԱրեւելք, որով երկուըն եւս Քետուրայ ծնունդ են կամ Աքրահամոււ: Խսկ որով հետեւ մի և նոյն կարծիքն կամ աւանդութիւնն կար Հայոց Արշակունեաց մէջ թէ նորա ևս ցեղակից են Արշակայ Մեծի, հետեւապէս զԱմատունիս կ'ընդունին իրեւ ազգակիցս, գիւղեր և զաստակերտաներ կ'ընծայեն հանդերձ տանուտէրական պատուով, որով Ամատունեաց Տէր կոչուին: Ակայն մտածելով որ Արտաշէս Բ. Սմբատայ ձեռամբ կ'ազատի Երուանդի կոտորածէն և Պարսկաստան կ'ապաւինի, բազմաթիւ ծանօթ իշխաններու թիւի մէջ պէտք է համարել նաև զԱմատունիս, որը հիւրասիրութիւն և պաշտպանութիւն ցոյց տուած լինին մանկանն Արտաշիսի և Սմբատայ. և Մանովեան կոչումն, հարկ չի դներ մեր վրայ ընդունել որ նա հրէութենէ ծագած է, այլ ընդհակառակն կը յօժարինք Արգարու որդւոյ Մանովայ Ստորին Հայոց և Ասորոց թագաւորական զարմէն համարել, որոնք կը թագաւորէին Եղեսիս: Որով երբ Արտաշէս թագաւորութեան կը հասնի, կը հրափրէ իւր բարերարներուց թագաւորացարմ մի իշխան (Վահան¹ անուն?), կը վարձատրէ գիւղերով և զաստակերտներով: Դարձեալ Խոսրով Ալն տան կոտորածի ժամանակ, Արտաւազդ և Օտայ Ամատունիք կը յաջողին ազատել զՃրդատը և Խոսրովի փոխիզը և կը պահեն զԱնի Արշակունեաց Ռստանն և գերեզմաննոցն: Մինչդեռ միւս նախարարներ գնացին առ Արտաշիրն և ընդունեցան անոր տէրութիւնն: Խոսրով Գի գերութեան ժամանակ դարձեալ Պարզեւ Ամատունին և Շաւարշ Կամսարականը փորձ կ'անեն ազատելու զթագաւորն: Խոսրով՝ կամսարականի ազգակիցն էր, և սակաւ ժամանակ անցեր էր որ Շաւարշի եղբայրն Գաղաւոն՝ թող վաղնջուց ազգականութիւնն՝ արշակունի անուամբ Խոսրովէն պատուել էր¹: Խսկ Պարզեւ Ամատունին և իւր որդին Մանուէլ Բնէ կը ստիպէր զիրենք թէ իրենց

1. Այս անուն յատուկ և սիրելի է Ամատունի տան. Խոսրով Բի. ժամանակ Վահան Ամատունին կը յաղթէ Մազքթաց. Ա. Մեսրովքի ժամանակ Վահան Ամատունին է Հազարապետ, Վարդանանց պատերազմի մէջ, շարժեալ Վահան Ամատունին է Տանուտէրն և այլն: Դիմելի է որ Վահան և Արտաւազդ անուններն յաճախ Մամիկոնիան Տան մէջ զործածական են անուններ որ տօնմական էին Հայոց ազնուականութեան մէջ. և սակայն Մամիկոնեանք, պատ են հրէայ լինելու զաղագարքն:

2. Եւ զբեզ, Պատաւոն, արիւն իմ և հարազատութիւն, ոչ ըստ վաղնջուց ազգականութեան, այլ ըստ արքեանս՝ որ ի մօրէ ցումէ Արշանուշայ արշակունայ, հանեալ զբեզ ի հայրենեաց ցոյց կամսարականաց և ի մայրենիս ցոյց յիմս առեալ ազգ, արշակունի անուամբ պատուեցից: (Խոր. զիր Գ. Գլ. Եր.)

կեանքը և թէ բոլոր տոհմն մահուան վտանգին ենթարկել. զիտենալով
որ այդպիսի զործոյ մը պատիժն մահ է և չնչումն ազգատոհմին։ Առ
այսպիսի զործ անձնանուէր և քաջայանդուղն միայն ազգականութեան
և արենակցութեան զգացմունցն կրնար զրդել։ Այնպէս որ եթէ Պար-
գեւ Ամատունին մերձաւոր ազգական չլինէր Խոսրովայ, Արտաշիր չէր
հրամայեր մի կերպ տիկտեսակ հանել և զնել Խոսրովի աչքի առաջ, որպէս
զի սաստկացնէ անոր կոկիծն և գերութեան տանջանցն¹։ Մանաւանդ
աւելի իմ հաւաստիք Ամատունեաց ազգակից լինելուն Արշակունեաց
հետ, կ'ուզեմ յիշել նաև Խոսրով Բն վերաբերմունցն առ Վահան Ամա-
տունին որ Մասրթաց յարձակումն քաջապէս վանելէն զկնի, Խոսրով
Օշական զիւզն կը պարզէ Ամատունոյն, ուր կը հաստատէ զիւր բնա-
կութիւն։ Արդ Այլարատեան աշխարհն բնիկ սևիականուրիւն էր Արշա-
կունեաց, հազիւ թէ Խոսրով օտարի մը տար այդ զիւզը, զեղեցիկնե-
րուց մէկն, եթէ Ամատունիք ազգակից չլինէին Արշակունեաց։ Ինչպէս
Տրդատ ևս պարզեց Երեակն և Արշարունիքն իւր ազգակից կամսարա-
կանաց։ Դեռ աւելին կայ. Ամատունիք ազգականութիւն ունեցած են
նաև Լուսաւորչայ տանը հետ, զի Օտայ կիսարիայէն կը ճանաչէր ըզ-
Գրիգոր, երբ նա իրը օտարական (?) և անծանօթ Տրդատայ ծառայու-
թեան մէջ կը մտնէ. Յեսոյ Արտաւազդ (անշուշտ Ամատունի) փեսայ
Օտայի կը մտանէ զԳրիգոր Անակի որդին լինել. մինչ Օտայ Զենոռ
Գլակայ մէջ, Գրիգորի անհերոջ քեռի կը կոչուի։ Այս խնամութիւնն օ-
տարութեան մէջ, արենակցական կապերով միացուցեր էր այս երկու
տներն. անոր համար զուցէ Մեսրովը, աւելի հակեալ էր առ Ամատու-
նիս, որոնք ինչպէս յիշեցինք անձնանուէր եղած են առ Արշակունիս
և առ Տունն Գրիգորի, որով իրբեւ առ առաւել ընտանի կը յայտնէ իւր
փափաքն թաղուելու յօշական։

*
* *

Մեսրովը մեռաւ այնպիսի ժամանակի մէջ, երբ արդէն զործը
հաստատուն հիմունցների վրայ զրուած էր, և երկիւղ չկար այլ ևս
վիասուելու ժամանակի հարուածներէն։ Հոգին լուսաւոր նշանի շողի
հետ չուելով յերկինս, սրովքէատես աչօք Մասեաց սրբամարուր զա-
գաթէն զիտեց իւր քառասնամեայ երկար տրնութեանց, արտասուաց և
հեծեծանաց բեղմնաւոր արդիւնցն. աչեց Հայաստանի դալարազեղ հա-
սակներն և բանաւոր անդաստաններն, մելուաջան մշակներն, զննեց
մտքի տիրապետութեան յաղթանակն. զգաց որ իւր կանզնած ամբար-
տակն ոչ բռնութիւն, ոչ ժամանակն չպիտի կարենան կործանել, այլ

1. Իսկ Պարզէ ի կալանու բմբռնեալ, ածաւ առաջի Արտաշրի, և տիկտեսակ զործեալ ու-
սուցմամբ, հրամայեաց զնել յանդիման Խոսրովայ հանապազ։ (Խոր. գերք Գ. գլ. ծ.)

զուգահաւասար իւր նուիրական Մասեաց, վսեմ և խրոխտ զլուխն և կերպարանքն ցոյց պիտի տայ զալիք ազգերու, դա Հայի կեանքն է որ անոր հետ պիտի ապրի: Եկեղեցւոյ սաղմոսաց մըրմունջն պիտի խառնուի դրախտի գետերու մոնչիւնի հետ, արբուցանելու Հայոց հոգին. որով միշտ նորոգուի և վերածնանի ժամանակի հնութեան մէջ: Գիր և զրականութիւն եղաւ մարմնացումն հայութեան, ազգային կեանքն խտացաւ մազաղաթներու ծալքերու մէջ. բարեր պիտի մաշին, պարխապներ կործանին, բաղացներ հետախաղաղ պիտի ծածկուին հողի տակ, սակայն մեր նախնեաց մատենազգութիւնն պիտի մնայ կոթող մը անցեալ հայութեան, յոյս մը ապազայ սերնդեան, միջոց մը իրեն գոյութիւնն պաշտպանելու և ոյժ մը վերանորոգութեան և վերածնութեան: Միայն Մեսրով անունն ասելն, կը բովանդակէ յինքեան քառասուն դարուց պատկերն, որոյ առջեւ դարեր յարգանքով կը խոնարհեցնեն իրենց զլուխը:

Ժեղ դարաշընանի կատարումն՝ համօրէն զրական աշխարհի յարգանաց արիտուրն էր որ Մեսրովբայ անմահ ճակատին լուսասփիւռ մը կ'աւելցնէ: Մենք ալ առաջիկայ զրութեամբ կամեցանք մեր նաքարակիտն ձգել հայրենի գանձանակին մէջ, ուզելով պատուել անոր ծագումն և ծնունդն, ջանացինք ցուցանել որ թագաւորական և Հայրապետական տներու պատուաստէն բողոքած եղական ընձիւղ մ'էր, և անով կարողացաւ գործել և ի կատար ածել գերմարդկային, գործը, զրոց գիւտն Հայոց, Վրաց և Աղուանից, և Հայկական Մատենազգութեան սկզբնաւորութիւնն և յառաջադիմութիւնն, անով յառաջ եկած խմորումն երեք զբացի քրիստոնեայ ազգերու, և այն ևս այնքան սուզ ժամանակի մէջ:

Արդարեւ ապշեցցուցիչ է մոտածելն անգամ թէ մի մարդ որ երեսուն և հինգ տարիներ հանդիսացաւ իրեւ համաշխարհի ախոյեան, մի գերրնական էակ, մի ստեղծագործական ոյժ, ապրեցաւ և գործեց և կերպարանափոխեց ներկայ և գալիք ժամանակները, վերածնանելով մի ողջոյն ազգ բարբարոսութեան խաւարէն, լուսոյ, յառաջադիմութեան, քաղաքակրթութեան շաւիղի մէջ դնելով, տպաւորելով մի այնպիսի անջնջելի կնիք իւր ժամանակին, որ Հայն Ասկի դար պիտի կոչէր, հազիւ գիտենք թէ Հացեաց գիւղէն էր և երանելի Վարդանի որդին: Մեսրովի զրական և քարոզչական աշխարհակալութեան առջեւ չեմ ասեր ժողովուրդ, շինականք և քաղաքացիք, համակրողների կամ աշակերտների մի խումբ, այլ Հայաստանի և օտար աշխարհաց ամենաբարձր ազնուականութիւնն, ազատք, իշխանազունք¹, թագաւորը² և կայսերը,³ Եպիսկոպոսունք և Հայրապետը⁴ ելեելս առնեն իրենց յար-

1. Կորիւն, էջ 14.

2. Կոր. էջ 15.

3. Կոր. էջ 17:

4. Կոր. էջ 18:

գանաց և պատուասիրութեանց ցոյցերու մէջ, մանաւանդ Բիւզանդիոնի գոռող արքունիքում, վերջապէս այն սերտ, համերաշխ և անրաժան զուգակցութիւնն, գործակցութիւնն, աննախանձ փառաբանութիւնն առ անձն Մեսրովքայ ի կողմանէ Ս. Սահակայ և Վուամշապուհ թագաւորին ապացոյց մ'են նորա բարձր և ազնուական ծագումին. բաւական են փարատելու ամեն տարակոյս և հաւաստելու զրեթէ անվրէսպ կերպով, Մեսրովքայ մեծ նախարարական վահօնեաց ցեղէն սիրելուն, Արշակունի թագաւորական տան ազգակցութեան և Ս. Գրիգորի ազգի հետ արենակցութեան. Այլազգ այդ մեծ մարդու կեանցն որ մինչեւ ցարդ իրրե մի առեղծուած հասեր է մեզի դարուց ի դարս, անհասանելի և անբացարելի կը մնայ թէ ինչպէս «մի համեստ զիւղացի» հակառակ դարու ոգույն, քաղաքական զուտ ազնուապեստական դասակարգին՝ վարած լինի մեծամեծ և պատուաւոր պաշտօններ թագաւորաց արքունիքում, զինուուրական արուեստով սիրելի եղած իւր զինուուրաց¹, յետոյ մերկայած «զիշանակիր ցանկութիւնս» այսինքն իշխանական մարմանական պատիւն որ էր Տանուտէրականն. և ուր որ կը ներկայանայ թէ Հայոց աշխարհի մէջ և թէ օտար արքունիքներում իրրե ծանօթ, իրրե համահաւասար պատուով և աստիճանով թագաւորավայել ընդունելութիւն կը գտնէ. ի նկատի տանելով որ եկեղեցական դասակարգի մէջ բարձր աստիճան չունէր, ոչ եպիսկոպոսական (և թերեւ նաև քահանայականն), մինչդեռ ամենցն թագաւոր և Հայրապետ միծագոյն պատիւններ կը շուայլեն իրրե ազնուազգիի մը, իրրե առ Ռւսուցող և Վարդապետ Հայոց ազգին, Հայ դպրութեան : Մեր ինքնին կը կանիւնիք մեր ուսումնասիրութեան նուրատի լինելը խոստովանելու, զուցէ և առանց խոր հիմունքներ ձգելու ըննադատական հողի վրայ. սակայն ապագայի ըննադատութիւնն և կամ մեղաղանքն չկասեցուց զմեզ՝ ինչպէս ասացինք, ամուլ քարեր իրար շփելու, յորմէ ելած աղօտ լոյսն գուցէ ծագէ նշոյլ մի հաւաստի Մեսրովքայ ծագման, ազգի և տոհմի վրայ և պատճառ տայ իմաստնազունից հասնելու լաւագոյն եզրակացութեանց²:

Երեկի աշխարհիս տիեզերական յօրինուածի մէջ, ոստումներ տեղի չեն ունեցած, բնութիւնն Աստուծոյ ձեռքէն ելած կանոնաւոր կերպով ընթացեր է անկատարէն դէպ ի կատարեալն զնալով: Այսպէս նաև բանաւոր աշխարհի մէջ ոստումներ չեն տեսնուած, այլ քաղաքակրթութիւնն իւր զարգացման աստիճաններէն պէտք է անցնի կատարելութեան հասնելու համար. մեծ մարդ յանկարծ չի ծնանիր, այլ հարկ է որ մի ժողովրդեան և տոհմի երակներու մէջէն սողան քաղաքակրթութեան սերմունք զարերու ընթացքի մէջ և այն տան կարելի է սպասել մեծ խելքի, տաղանդի և հանճարի տէր մարդկանց: Ոչ մի Առղոն, ոչ մի նու-

1. Աակայն այրուժին Հայոց բովանդակ ի ձեռն Նախարարացմ առաջնորդէր ի պատերազմիս (Եղիշէ Էջ 11).

2. Feci quod potui, faciant meliora potentes. Արարի որչափ կարացի, թող առնեն լաւագոյն որք կարողըն են.

մա, ոչ մի Պերիկլէս, ոչ մի Օգոստոս կամ Նապոլէոն, Հօթենդօտներ կամ Զուլուներ չեն կարող ծնանել։ Այսպէս մեր հինգերորդ դարն չէր կարող ծնանել մի Մեսրովք, եթէ ասոր նախահայրերու երակներու մէջ խաղացած չլինէր զարերէ ի վեր քաղաքակրթութեան աւիշն։ Մեսրովք եղաւ լուսավիայլ ասաղ մի պերճապայծառ համաստեղութեանն որ դարերու ընթացքի մէջ իւր անշէջ վառարանէն սփռեր է Ասքանազեան ազգին և Հայաստան աշխարհի վրայ կրօնքի և զիտութեան ճառագայթներն։ Կրօնք և զիտութիւն թէ հեթանոս և թէ բրիտոննեայ զարաշքրջաններու մէջ, ապրել, սնել և աճել են քաջատոհմիկ վահունեաց ազգի մէջ, որ յանյիշատակ զարերէ ի վեր Աշտիշատու հրաշագեղ սարաւանդակի վրայից և ակնապարար Հացեաց զրախտի ձորակից և հովասուն պուրակից ջերմացուցել, լուսաւորել և ապրեցուցել է Հայաստանի սիրտն. պահել, պաշտպանել և ծաղկեցուցել են կրօնքն, սիրել և մշակել. և ուսուցել են զիտութիւնն, որոց փառազազաթն կը հանդիսանայ իրենց անզուզական զաւակն Մեսրովք, որ իրաւամբ կրնայ կոռուիլ Փրկիչ¹ և բարերար Հայ ազգին։

Հ. ԳԱԲՐԻԵԼ, Վ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

1. Կարգեալ այնուհետեւ Փրկչին առաջնորդութեամբ զգիր զրենոյն հայերէնի և հելլենացի ուզդեալ յօրինուածն։ (Պազ. էջ 42)։

